

ANAHIT: REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE

ANAHIT: REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



# ԱՆԱԿԻՏ

## ՀԱՆՐԱՅՆ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵԱՐՈՒԷՆՍԱԿԱՆ

Ե ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1903

ԹԻԻ 4

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « րոյս » երկու հաճանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞՞՞՞՞ հոգին չմարդմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ շիտակցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

DIRECTEUR : A. TCHOBIANIAN

ՔԱՅՈՒԱՍ Է ԲՆԺԱՆՈՐԳՍԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ա Ն Ա Հ Ի Տ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

ԱՆԱՀԻՏ պիտի չարունակէ հրատարակուիլ միեւնոյն ուղղութեամբ եւ միեւնոյն ծրագրով, գրական եւ գեղարուեստական բաժինն աւելի ճոխացած :

ԲԱԺԱՆՈՐԳԱԿՆԸ ԿԱՆԻՒԿ Է :

Այն բաժանորդները որ զեռ չեն վճարած իրենց բաժնեգինը, կը խնդրենք որ փութան իրենց պարտքը հատուցանել : Իսկ ասկէ յետոյ, «Անահիտ» պիտի շրջենք միայն այն բաժանորդներուն որոնք կանխիկ պիտի վճարեն իրենց բաժնեգինը :



## POÈMES ARMÉNIENS, ANCIENS ET MODERNES

TRADUITS PAR

A. TCHOBANIAN

ET PRÉCÉDÉS D'UNE ÉTUDE DE

GABRIEL MOUKI Y

Գինի փափաքողները պէտք է զիմեն հետեւեալ հասցէին .

Librairie A. Charles, 8 Rue Monsieur le Prince, PARIS

Գին 2 Ֆր.



ԼՈՅՍ ՏԵՍՒԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE. N. 1

## CHANTS POPULAIRES

# A R M É N I E N S

TRADUCTION FRANÇAISE AVEC UNE INTRODUCTION

PAR  
ARCHAG TCHOBANIAN

PRÉFACE

DE

PAUL ADAM



LIBRAIRIE PAUL OLLENDORFF, PARIS, RUE DE LA CHAUSSÉE D'ANTIN, 50

Գինի ուղղողները պէտք է զիմեն ՕԼԵՆՏՈՐՖ գրավաճառանոցին

Գին 3 Ֆր. 50

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱՎԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱՎԱՆ

Ե . Տ Ա Ր Ի

Ա Պ Ր Ի 1903

Թ Ի Ի 4

## ՊԵՏՔ Է ՕԳՆԵՆՔ ՁԷՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒՆ

«Անահիտ»-ի վերջին թիւով կը հրաւիրէի հայ հասարակութիւնը ուշադրութիւն զարձրնել, Ձէյթունի որբերուն տխուր կացութեան վրայ եւ անոնց օգնութեան հասնիլ: Ուրախ եղայ նկատելով որ պ. Չերազ ալ, միեւնոյն ատեն, «Փիւնիկ»-ի հրատարակութիւնէն ազդուած, միեւնոյն հարցը հրապարակի վրայ զրած եւ հանգանակութիւն բացած է: Կը յուսամ որ արտասահմանի եւ կողկասի բոլոր հայ թերթերը միեւնոյն հրաւերը պիտի որդեգրեն իրենց ընթերցողներուն որպէսզի հանգանակութիւնը յանգի լուրջ գումարի մը եւ միանգամ ընդ միշտ այդ հարցը լուծուած նկատուի:

Պ Չերազ կը յայտարարէ թէ հատուած գումարները մտադիր է ինքն իսկ իր անունով ուղարկել Պոլսոյ պատրիարքարանին, որպէսզի Ձէյթուն զրկուելով յատկացուին որբանոցի մը հաստատման: Պ Չերազ քաղաքական գործիչ մ'ըլլալով, կը կարծեմ թէ իր կողմէ անձնապէս հաւաքուած եւ պատրիարքարան զրկուած գումար մը կրնայ կասկածելի թուիլ թուրք կառավարութեան եւ որոշուած նպատակին համար անոր դործածումը կարող է արգելքներու հանդիպիլ: Այս նկատումն աչքի առջեւ

ունենալով է որ ես լաւագոյն ու չարամարգոյն պեպեցի որ գումարները կեդրոնանային Փարիզի Հայոց քահանային մօտ եւ անոր ձեռքով զրկուէին Ձէյթունի Փարիզի հայ գաղթականութեան պաշտօնական քահանային կողմէ զրկուած եւ զուտ մարդասիրական գաղափարի մը իրադործման յատկացուած գումար մը, առանց ու եւ է դժուարութեան կրնայ իր տեղը հասնիլ եւ իր նպատակին ծառայել: Պ. Չերազ պիտի համաձայնի անշուշտ իր ձեռքով հաւաքուած գումարներն ալ յանձնել Վոսմապուհ քահանային:

Անցողակի պէտք է ըսեմ թէ պ. Չերազի յօշուածին մէջ նկատեցի կարեւոր սխալ մը զոր անհրաժեշտ կը համարիմ մատնանիշ ընել: «L'Arménie» թերթիւն հիմնուելէն ի վեր առաջին հանգանակութիւնն է զոր կը բանանք. կ'ըսէ պ. Չերազ որովհետեւ Ձէյթունի մէջ որբանոցի մը հաստատման չափ օգնութեան արժանի ուրիշ ու եւ է գործ չենք գտած զեւ»: Ես կը կարծեմ թէ Ձէյթունի որբերուն օգնելու համար բացուած այս հանգանակութիւնն շատ աւելի կարեւոր էր այն հանգանակութիւնը որ «կոստող» Ձէյթունցիներուն օգնելու համար բացուեցաւ 1895ին, եւ որ, աւա՛ղ, աւելի սպառնալիքով հաւաքուած գումարներով կազմուեցաւ քան ինքնաբերաբար տրուած նպաստներով: Եթէ այդ հանգանակութիւնը քանի մը միլիոնի յանգած ըլլար (եւ հայ հարուստ դասակարգը դիւրաւ կրնար

այդ գումարը ձեռացնել) կամ նոյն իսկ եթէ գոնէ արդէն ձեռք ձգուած գումարը պայքարի միջոցին իր տեղը հասած եւ իր նպատակին յատկացուած ըլլար, այսօր Զէյթունը ձեռք կարկանդու ստիպուած չէր մնար, եւ ամբողջ ազգը ուրիշ կացութիւն մը, ուրիշ դիրք մը կ'ունենար: «Բարեգործութիւն»ը գովելի է եւ օգտակար, բայց յի բաւեր՝ ինկած ազգ մը վերականգնելու համար: Ինկած ազգի մը համար էականը պայքարն է, եւ իր ամէն տեսակ սեփերը նախ եւ առաջատոր պէտք է յատկացուին: Նոյն իսկ այս վայրկեանիս, կոչում ընելով հանգերձ իմ հայրենակիցներուս որպէսզի Զէյթունի որբերուն կեանքն ու կըրթութիւնը ապահովեն, երբեք չեմ մտածեր թէ ատի մեծագոյն ու միակ գործն է զոր մեր ժողովուրդն ունի կատարելու: Մեծագոյն ու միակ գործը կը կայանայ ապահովելու կեանքը այն անսահման որբին որ հայ ազգն է: Բայց այդ էական գործին մեր բոլոր ուժերը նուիրելու անհրաժեշտութիւնն ընդունելնիս մեզի չ'արգիլեր որ ուշադրութիւն դարձնենք նաեւ բոլոր հայ որբերուն ու մանաւանդ Զէյթունի որբերուն թշուառ կացութեան վրայ եւ անոր գարման տանելու համար կատարենք մեր պարտականութիւնը:

Բարեպատեհ զուգարդիպութեամբ մը ճիշդ այս օրերս լսյս տեսաւ «Զէյթունցի» ստորագրող եւ Զէյթունի պայքարներուն շատ անգամներ մասնակից եղած ձերունի Զէյթունցիին «Զէյթունի պատմութեան» երկրորդ հատորը, որ կը նկարագրէ Տաւրոսի արձուկը ընդին ներկան, 1895ի պայքարը մանրամասնօրէն եւ շատ կենդանի ու շահեկան գոյներով կը վերապատկերացնէ եւ Զէյթունի անտեսական ու քաղաքական կացութիւնը կը պարզէ: Անկէղծ, բնական ու պարզուկ ոճով մը գրուած այդ մեծապէս սրտաշարժ գիրքը, — որու մասին աւելի ընդարձակօրէն պիտի գրեմ մօտերս «Անահիտ»ի մէջ. — կ'արժէ որ կարդացուի բոլոր Հայոցմէ: անոր ընթերցումը շատ բան պիտի սորվեցնէ թէ՛ Զէյթունցիներուն հիանալի քաջութեանը վրայ, թէ՛ մեր արտասահմանի յեղ. վարիչներու անպարտաճանաչ ընթացքին վրայ եւ թէ՛ ամբողջ ազգին յանցաւորութեանը վրայ հանդէպ Տաւրոսի կտրիճներուն: Այդ ընթերցումը պիտի նպաստէ նաեւ ցնցելու մեր ժողովրդին այժմեան ան-

տարբերութիւնը, պիտի մեզի զգացնէ՝ աւելի հզօրապէս քան ուրիշ ո եւ է կոչ՝ մեր պարտականութիւնը Զէյթունի հանդէպ. — ու Զէյթունի որբերուն ի նպաստ բացուած հանգանակութեան լուրջ արդիւնք մը ունենալուն վրայ պիտի տղդէ խորապէս:

Գրքին ամենէն սիրուն էջերէն մէկը կը կազմէ ա՛յն ուր հեղինակը կը յիշատակէ Ֆերնուզի վանահայր դիւցազնական Բարթողիմէոս վարդապետին ձառը՝ 1895ի վեմ օրերուն Զէյթունցիներն ի պայքար հրաւիրելու համար արտասանուած. այստեղ կ'արտատպեմ այդ ամբողջ ճառը, որ աւելի գեղեցիկ է իր վայրենի պարզութեանը մէջ քան ո եւ է քերթուած որ հայերէն լեզուով գրուած ըլլայ երբեք:

« Ժողովո՛ւրդ, մինչեւ հիմա մեր գիւղացիք շատ պատերազմ մղեր են թուրքին դէմ. ի՞նչ բանի համար, գիտե՞ք... Ես ըսեմ ձեզ՝ ուրիշ բանի համար չէ, այլ՝ ազգի, օրէնքի, Հայուհողի ազատութեան համար. բայց մեր թշնամին լման մը չկրցանք ջնջել. ասոր համար պէտք է որ մեր այս պատերազմը անցեալ պատերազմներու շնամանցնենք. ասիկա շատ մեծ է եւ վերջինն է. վասնզի բոլոր ազգին ազատութեանը համար պէտք է պատերազմինք. այս անգամ ամէն մարդ մեռնիլը, ջարդուբուրդ ըլլալը աչքը թող առնէ. ասկէ ետքը մեռնինք Հայու համար, ապրինք Հայու համար: Եթէ այս անգամ յաղթանակը մերը ըլլայ՝ բոլոր ազգը ազատած պիտի ըլլայ. եթէ՛ Աստուած մի արասցէ՛ յաղթուինք՝ մարտիրոս կ'ըլլանք, բայց եւ այնպէս ազգը թշուառ կը մնայ:

« Այսպիսի պատերազմի մէջ ի՞նչպէս վարուելի պէտք է գիտե՞ք՝ որպէսզի ազգը չկորսուի ու ազատութիւն գտնայ. ինչպէս որ առեօթի առիծ մը կ'ելլէ իրեն որսը գտնելու համար կը պտըտի եւ երբոր գտնայ՝ ուժով մը վրան կը վազէ, անորպէս դուք ալ թշնամիին վրայ յարձակելու էք, այս լաւ գիտնաք՝ Թուրք չսպաննած մեռնողը ոչ մարտիրոս կը սեպուի, ոչ ալ Արքայութիւն կրնայ երթալ, ոչ ալ ազգ կը սեպուի: Այնպէս թէ՛ ք մէկ հատ աւելի սպաննելու:

« Եթէ ամէն մարդ իմին ըսածիս պէս պա-

տերազմի, մենք անպատճառ կը յաղթենք թշնամին, ատոր մասին հոգ մ'ընէք:

« Բայց եւ այնպէս գիտցած ըլլաք որ մարդ մը այսպիսի պատերազմի մը մէջ յաղթող չկրնար ըլլալ՝ եթէ Գրիստոսի վրայ կ'ուտարեալ հաւատք չունենայ. անոր համար է որ ամենուր ահա կը խօսիմ, պէտք է որ լման հաւատք ունենաք:

« Այս ալ կը պատուիրեմ ձեզ. ամէն մարդ, էրիկմարդ, կնիկմարդ, ծեր եւ պառտ, երիտասարդ թէ օրիորդ, մինչեւ փոքր մանկունք, ամենքդ ալ պէտք է զինուիք. հրացան ունեցողը՝ հրացան, աւրճանակ, դաշոյն ունեցողը՝ դաշոյն, երկսայրի ունեցողը՝ երկսայրի, վեցհարուածեան ունեցողը՝ վեցհարուածեան, այս վերոյիշեալները չունեցողը՝ հետեւեալ գործիքներով բաւականանան, հատոցով, կացինով, մանր դանակով, շամփուրով, փետառով, մանդաղով, մանր հատոցով, քարով, մինչեւ անգամ մուրճով, զինուեցէ՛ք. որ ժամանակ որ թշնամին խառնուինք՝ արագ-արագ փորերնին խոթեցէ՛ք, թշնամոյն աղիքները դուրս թափուին, ամենեւին մի՛ վախնաք. Գրիստոս մեր կողմէն է՝ արդէն գիտէք որ Թուրքը վախկոտ կ'ըլլայ, ատոր համար բնաւ չմտածէք մենք ուժով կ'ըլլանք:

« Ահա Աւետարանը. Գրիստոս կ'ըսէ «Ով որ զինք ինձի համար կը կորսնցնէ, անիկա կ'ապրի. ով որ զինք չմոռնիմ՝ ընելով պահէ, անիկայ կը կորսուի»: Հիմա հասկցա՛ք. Գրիստոսի խօսքէն դուրս չեք ելլիր եւ ազգն ալ կը փառաորուի ու կը մեծնայ, Հայն ալ ստորկու թենէ կը խալըսի:

« Հիմա մեծ պատուէր մ'ալ ունիմ ձեզի. Հրացանածգութեան ատեն լաւ նշան տա՛ք, մի՛ արտորնաք, կաքաւի որսի նետկու պէս՝ նետեցէ՛ք, ու հետուէն մի՛ նետէք. շատ մօտէն նետեցէ՛ք, որ հրացանի ծուխը կապարին նետ փորը մտնայ: Մեր Ձէյթունի կռիւները այսպէս կ'ըլլային, չէ՞ որ պապենական սովորութիւն է՝ եթէ մոռցած չէք. ահա ասիկայ ստիպեալ կը պատուիրեմ, մօտէն ըլլայ հրացանածգութիւննիդ... »

Հեղինակը այս ճառին բնագիրն ալ նրատարակած է՝ Ձէյթունի բարբառով. ահա հատուած մը:

«... Իւնչ վոխա ուր տուչմունքն խառնը վընքըն հըմըն չապըխ չապըխ փէրիը խէթիցէք. խէթիցէք, հանիցէք. աղբքը մաղմըղբքը դօրս վիղիցէք. հէչ մի վախէք, Գրիստոս մեր դէ՞օն է. գաթը գիտէք ուր թո՞ւրքը վէխկիտ կուընը. էօտիւր համոր հէչ մըթք մէնէք. իւժէովէ կիլլինք... »

Ի՛նչ ջղուտ. կտրուկ, ամուր լեզու, լեզու մը ուր բառերը երկաթէ կզակներու մէջ կը թռնին կաղապարուած ըլլալ, սեղմուած ակունքերու մէջէն արձակուած:

Ամբողջ գիրքը լեցուն է այդ արի լեռնականներուն պողպատէ հոգին ցոլացնող զմայլելի մանրամաս ու թիւններով: Բայց գիրքն աւարտելէ յետոյ, մարդ անհուն ախրութեամբ կընամակուի, «մտածելով» թէ հին Հայու թենէն դարերով «մաքառող» Հայութիւնէն այդ ափ մը կտրիճները միայն մնացիր են որ պահպաներ են վաղնջական քաջութեան հին աւանդութիւնը. մինչ ուրիշ տեղեր բռնական բեմիմի կրցեր է անառնականացնել մեր խեղճ ժողովուրդը՝ երկարատեւ զինաթափութեամբ մը: Ուրիշ տխրութիւն մըն ալ, աւելի ամօթալից, կը զգայ մարդ՝ երբ կը կարգայ «Ձէյթունցի» ի այն տողերը ուր Ձէյթունի հասարակութեան անտեսական ողբալի կացութիւնը կը նկարագրէ՝ մասնաւանդ ԾԾի պայքարէն ի վեր, եւ մասնաւորապէս այն տողերը ուր Մարաշցի հայ բժիշկի մը ճիւղային դաւաճանութիւնը կը պատմէ: Ահա այդ տողերը.

«... Որովհետեւ մեր լեռնազաւառի քարերը մեզ հաց չեն տար, ստիպուած ենք մեր անտեսական աննախանձելի վիճակին մէջ ապրիլ: Եթէ բարերար ազգայինք Ձէյթունի վրձակը բարւոքելու նպատակով իրենց ջանքերը չխնայեն, Ձէյթունցին խեղճ եւ ողորմելի կացութեան մէջ չապրիր: Եթէ մի քանի կէտեր մեր բարերարները ի նկատի առնեն եւ գործադրեն, Ձէյթունցին բաւական կ'օգտուի թէ նրթապէս եւ թէ բարոյապէս: Մին այն է որ, Ձէյթունի մէջ երկաթի գործարան մը բացուի, որով տեղւոյն ժողովրդին միջոց կը տրուի իր նիւթական ըստ կարելւոյն ապահովելու երկաթը թէ առատ է եւ թէ լաւ: Երկրորդ՝ գինիի գործարան մը բանալ Ձէյթունի մէջ. Ձէյթուն ունի 21 տեսակ պատուական խաղող, միթէ՞ չէ

կարելի ատոնցմէ Պօրտո եւ Շամբաների գինիներն ու պէս ազնիւ գինի պատրաստել , մինչդեռ տեղացւոց պատրաստած պատուական գինին երկար չդիմանար : Թէեւ Ձէյթունցին պանդխտութիւնը չսիրեր , եւ այդ շատ զովելի է , որովհետեւ Ձէյթուն ի հարկին կտրիճի պէտք ունի , բայց լաւ կ'ըլլայ , իր տնտեսական կացութիւնը բարւոքելու համար , մի քանի ուշիմ պատանիներ Եւրոպա խրկուին երկաթագործութիւն , գինեգործութիւն եւ կաշեգործութիւն սորվելու : Անոնք դարձեալ վերագտնալով իրենց հայրենիքը շատ օգտակար ծառայութիւններ կրնան մատուցանել : Ուրիշ հարց մը՝ Ձէյթունի զպրօցները տեւողական ընելու համար , որովհետեւ հաստատ եկամուտ չըլլալով՝ երբեմն շարունակութիւնը կ'ընդհատուի , խորհուրդ կուտամ կրթասէր ազգայնոց Ձէյթունի մէջ՝ բազմիք մը բանալ : Եթէ միայն հազար ոսկի ծախսուի լաւ բազմիք մը կարելի է չինել եւ Ձէյթուն ջուրով ու փայտով առատ երկիր մը ըլլալով , կրնայ այդ հասոյթով դասատուները ապահով կերպով ապրեցնել : Քաղաքը կը բաղկանայ 1500 շուռնէ :

« Ուստի կոչ կ'ընեմ ներկայիս ազգասէր բարերարաց այս ծրագիրը իրագործել , եթէ բարերարք կամին՝ կարող են այսպէսով մեծ ծառայութիւն մատուցած ըլլալ մեր ժողովուրդին :

« Պատ . ընթերցողաց մէջ գուցէ գտնուին այնպիսիներ , որոնք առարկին թէ Ձէյթունցին ինքն իր պիտուն ճարը թող գտնէ եւ գուրսէն օգնութիւն չակնկալէ : Բայց ինչպէս վերը յիշեցինք , Ձէյթունցիք նիւթապէս անկարող են , բառին բուն նշանակութեամբ աղքատ . ինչպէս առածը կ'ըսէ՝ Հաւր սագի հակիթ չէ կարող ածել :

« ... Թեւեւ ընթերցողք պիտի զարմանան իրը ըսեմ թէ Ձէյթունցիք բժիշկէ ալ զուրկ մնացած են : Եւր Ձէյթունցին հիւանդանայ , ասաներէցը կը կանչեն , նա կուղայ եւ չորս գլուխ բժշկութեան աւետարան եւ «Փարատեա» ազօթքը կարգալէ յետոյ կը մեկնի . հիւանդը ասոր վրայ թեթեւցայ ըսելով կը քաջալերուի եւ օրըստօրէ կ'աղէկնայ , թէեւ ոմանք ալ կը

մեռնին , եւ այս վերջիններուն համար ալ կ'ըսեն Աճուր իկիք մեռով (ձակատագիրը այսէ եղեր) :

« Ձէյթունի մեծամասնութիւնը համամիտ էր բժիշկ մ'ունենալ նախապաշարմունքներէ զերծ մնալու համար , եւ այդ առթիւ 1890ին գիմեց Սարաչու կառավարիչ Սալիֆ փաշային որ իրենց խնդիրքին համեմատ անոնց զրկեց Սարաչարնակ Այնթապցի Հէքիմ Ապուճան հայ բժի . կ մը , որ զրգուած էր փաշայի կողմէն Ձէյթունցոց ու եւ է վնաս մը հասցնելու համար . եւ սոյն տխմար եւ տաճկամոլ բժիշկին գործածած դեղերէն հինգ հարիւրէ աւելի անմեղ մանուկներ զոհ գացին քիչ ժամանակի մէջ (մանրամասնութիւնք տես , «Ձէյթունի ներկ . եւ անց» . Ա . հատոր , երես 152)

« Ահա այս ալէտալի եւ մահաբեր դէպքէն յետոյ Ձէյթունցիք բժիշկ ունենալու նպատակէն ետ կեցան : Այժմ ոչ բժիշկ կայ Ձէյթունի մէջ եւ ոչ ալ դեղարան , բայց ի մի քանի նախնի վիրաբուժներէն :

« Բայց եւ այնպէս նորէն բժիշկ խնդրողներու թիւը մեծամասնութիւն կը կազմէ , ըսելով թէ հիւանդին համար բժիշկ պէտք է իսկ հոգեւոր միտթարութեան համար՝ Տէր պապա (քահանայ) :

« Ձէյթուն ոչ թէ միայն բժիշկի կը կարօտի այլ նաեւ ահագին հիւանդանոցի մը . Ձէյթունիւր գիւղօրայքով հանդերձ կը պարունակէ իւր մէջ 2370 տուն զուտ հայ . իւր շուռնեանայ մի հիւանդանոց : Ո՛րչափ կարիճներ հասակորին շառած՝ կը յանձնուին սեւ հողինս հիւանդանոցի չգոյութեան պատճառով , »

Այս տողերը հսկայ ապտակ մըն են զոր ալիւր «Ձէյթունցի» կը փակցնէ մեր ամբողջ ազգի երեսին : Ձէյթունը , մեր գատիւը պահպանող Ձէյթունը , մեր թանձր յուսահատութեան մէջ շողացող միակ նշոյլը , կայտէ հիւանդանոցի մը , կարօտ է իր տնտեսական կացութիւնը բարւոքելու համար քանի մը տարբական միջոցներու գործադրութեան , կարօտ է իր որբերուն համար տեւական ու լուրջ հաստատութեան մը հիմնարկութեան , — եւ մեր ժողովուրդը դեռ մինչեւ ցարդ չէ կատարած իր պարտքը : Ասի անհաւատալի պիտի թուէր օտարներուն , եթէ գիտնային : Ստարները պիտի թքնէին մեր երեսին եթէ իմանային այս խաղ-

քու թիւնը : Մենք կ'ուզենք որ օտարները մեզ մշարդեն : Բայց յարգուելու համար պէտք է որ արժանի ըլլանք յարգանքի : այսպէս վարուելով հանդէպ Ձէյթունի , մեզ յարգանքի անարժան կացուցած կ'ըլլանք :

Ձանանք գէթ այժմ . — Թեպէտ ո՛ւշ , — դարմանել մեր յանցանքը , սրբել մեր ճակտէն այս տօթաբեր արատը : Պէտք է որ Ձէյթունի որրերուն ի նպաստ բողոքած հանգանակու թենէն ձեւանայ գումար մը այնքան կարելոր , որ հնարաւոր ըլլայ անով ոչ միայն որբանոց մը հաստատել այնպէզ , այլ եւ հիւանդանոց մը : Հիւանդանոց ո՛րքանոց հաստատելը « քաղաքական » գործ մը ընել չէ : Թուրք կասապարութիւնը արգելք յարուցանելու ո եւ է իրաւունք չի կրնար ունենալ . նոյն իսկ եթէ արգելք յարուցանել ուզէր , եւրոպական տէրութիւնները , — որոնք 1895ի Ձէյթունի հաշտութեան պաշտպիրը վաւերացնելով իրենց մասնաւոր պաշտպանութեան տակ առին Ձէյթունը . — վստահարար պիտի օգնեն մեզի որպէսզի այդ ծրագիրը իրագործուի . ուրիշն առանց ո եւ է վարանման քոչոք դասակարգի Հայերը պարտաւոր են մասնակցիլ այս մանգանակութեան : Գլով քանի մը Ձէյթունցի պատանիներ « երկաթագործութիւն , գինեգործութիւն եւ կաշեգործութիւն սորվելու համար » եւրոպա զրկելու գաղափարին , զոր կ'առաջարկէ « Ձէյթունցի » , առի շատ զիւրաւ կրնայ իրականանալ . մեր հարուստներէն — մանաւանդ Ռուսահայ — կան շատեր որ ազգատ ուսանողներ եւրոպական համալսարանները կը զրկեն իրենց օգնութեամբ , արդ ոչ մէկ հայ ուսանող այնքան արժանի չէ օգնութեան , որքան Ձէյթունցի պատանիները . մեր հայ հարուստները կրնան անմիջապէս նկատողութեան առնել այս կէտը , եւ իրենց պարտքը կատարել : « Եւրոպայի հայ Ուսանողաց Միութիւն » ն ալ կրնայ , եւ պարտի , այս խնդրոյն վրայ ուշադրութիւն դարձնել եւ իր աջակցութիւնը նուիրել այս գործին :

Ապուճան մը « հրէշ » անուանելով մեր խիղճը թեթեւցուցած չենք ըլլար : Ամբողջ հայ ազգը ԱՊՈՒՃԱՆԻՆ ՀԱՒԱՍԱՐԱԾ Կ'ԸԼԼԱՅ , եթէ շարունակէ իր անտարբերութեանը մէջ յամենալ հանդէպ Ձէյթունին , որովհետեւ պարագաներ կան ուր անտարբերութիւնը այնքան ոճրագործ է որքան դաւաճանութիւնը :

ԱՐՇԱՅ ԶՕՊԱՆԵԱՆ

# ԱՍՏՂԸ

— 0 —

Վատարանին դէմը նստած առանձին .  
— Վշտի հընոց ես ալ , անոր մըտերիմ : —  
Երբ խօլ փախուտը կը դիտեմ վառ բոցին ,  
Հողոյդ թըրիչքը կը յիշեմ , եղբայր իմ :

Երբ , մըտածկոտ , կուգամ նըստիլ ծովուն դէմ ,  
Որ խառնըւի մորմոքս անոր ծըփանքին ,  
Ուրեմիներուն փշրուելը կը դիտեմ ,  
Եւ փշրու մը կը յիշեմ , ա՛խ քու կեանքին :

Վերջալոյսէն ըստփանք մը կը յուսամ .  
Բայց կը մարի անոր անուշ շողն ալ շուտ .  
Երբ կը քաշուի կ'երթայ արեւը փարթամ ,  
Եւ կը յիշեմ մարիլը քու աչքերուդ :

Արեւին տեղ՝ աստղեր հիմա կը փայլին  
Երկրնքին սեւ կամարին վրայ անսահման .  
Կը հիանամ սա մէկուն քաղցըր ցուքին .  
Աստուած , կ'ըսեմ , այլ բոցն եղբօրս է նըման :

Հոգի՛դ է ան անշուշտ , եղբայրս , որ իրեն  
Կը քաշէ միշտ իմ նայուածքըս արցունքոտ .  
Եւ կը ժպտի ինձ անհունին խորերէն ,  
Ու կը հաւտամ թէ երջանիկ ես դուն հոտ :

ՈՍԿԻ Ս. ՉԱՔՐԵԱՆ

Պիեֆ Բուլ



«ՀԱՅԳԱԿԱՆ ԿԻՒԿԻԱՆ», ԳՈՐԾ Պ. ԷՌԵՆԷՐ  
ԼՈՂՄԱՆԻ

Ինչ որ քաղաքակիրթ ըսուած ազգերու համախորհուրդ գործունէութենէն կախեալ էր իրականացում չդրուաւ, եւ անհատական նախաձեռնութիւններ միայն զայն իրադործեցին: Հայկական ջարդերուն սկզբնաւորութեան միջոցին, այնքան զիւրին էր քանի մը նաւորկել Սուլթան Համիտին յիշեցնելու համար թէ տակաւին դոյութիւն ունէր Եւրոպա մը՝ սկարը պաշտպանելու մասածող: Կառավարութիւնները իմաստութիւն համարեցան այդպիսի ցոյցէ մը ետ կենալը: Ընդհակառակն, անհատները վեհանձնութեան մէջ մեկզմէկ գերազանցեցին, կեղեքուող ու ջարդուող Հայերուն հասցնելու համար եթէ ոչ ամբողջական օգնութիւնը, գոնէ դարման եւ սփոփանք: Վերհելմ Բ. այնպիսի զիրք մը բռնած էր իր Պոլսոյ մտերիմ բարեկամին հանդէպ, որ կը թուէր թէ պէտք էր շատ համակրական արատայատուութիւններ սպասել գերման ժողովրդին կողմէ կարմիր Սուլթանի զոհերուն համար: Մտքի մեծ անկախութեան մ'ապացոյցը տալով ու աւելի փափաքելով կեղեքեալներուն օգնել քան թէ կեղեքչին հաճելի ըլլալ, շատ մը Գերմանացիներ մեծ յօժարութեամբ գրազեցան Հայերով: Այդ Գերմանացիներուն մէջ, պէտք է յիշելու պէտք է կեփախուսի ըով, պէտք է Լոնտոնը, որ վերջերս շահեկան գործ մը հրատարակած է «Փոքր Հայաստանի» վրայ: Պ. Լոնտոնի գրքին քննութիւնն ընելէ եւ անոր մարդասիրական գործը պարզելէ առաջ, օգտակար կը նկատեմ քանի մը տողով յիշեցնել թէ ինչ պէտք է հասկնալ «Փոքր Հայաստան» բացատրութեամբ:

Թրքական հրոսները կը սկսէին իջնել Ասիոյ բարձր սարահարթներէն, վանելով կամ ջնջելով ինչ որ իրենց անցքին կը դիմադրէր: Մեծ Հայաստանի ազգաբնակչութիւնները հետզհետէ զուրս մղուեցան իրենց հայրենիքէն, ու սփռուեցան Կապովովկիա, Տաւրոսի կիրճերուն մէջ տեղաւորուեցան. թիւերնին աճելով, այդ հայ ազգաբնակչութիւնները Կիլիկիոյ արգասանդ գաշտերն ալ գրաւեցին եւ մինչեւ Պամփիւլ-

եան ծոցը տարածուեցան, ծովեզերքի զլխաւոր նաւահանգիստներուն մէջ բնակութիւն հաստատելէ յետոյ:

Այն շրջանն էր ուր հպուժը աւելի սերտ կը գտնար Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ. ժողովուրդներու մեծ շարժմանց թուականն էր: Մահմետականներուն ձեռքէն Ս. Գերեզմանը կորցելու եւ ամբողջ Սուրբ Երկրին տիրանալու նպատակով դէպ Արեւելք յառաջացող Արեւմացիներուն խոյանքը, — Թուրքերուն, Թուրքմէններուն յառաջխաղացութիւնները դէպ ի Արեւմուտք, աննպատակ շարժումները, անձանթին տիրանալ նկատող մղումները: Վաճառականական աշխարհին կեդրոնը փոխուեցաւ այդ միջոցին՝ ի նպատակ հայկական նորածին թաղաւորութեան որ հինաւուրց Կիլիկիային մէջ էր հաստատուած, բաւական առաձգական սահմաններով, երբեմն մինչեւ Եփրատ տարածուելով ու «Փոքր Հայաստանի թաղաւորութիւն» անունով ճանչցուած:

Դարերով, ասորական ծովեզերքը, իր բազմաթիւ նաւահանգիստներով, — Տիւրոս, Սիդոն, Պէյրութ, Ալեքսանդրիա — միութեան զիծն էին կազմած Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ. հոն կը հասնէին Հնդկաստանէն, Պարսկաստանէն, Արեւելքի վաճառականական արուեստագործական կեդրոններէն եկող կարաւանները, եւ հոնկէ է որ ապրանքները նաւ կը դուռէին եւրոպական այլեւայլ նաւահանգիստները գրկուելու համար:

Մոնիոլեան արշաւանքը իրերու ընթացքը փոխեց. միջազգային վաճառականութեան կեդրոնը փոխադրեց Պարսկաստանի հիւսիսակողմը, Դաւրէժ, Կարաւաններն իրենց գիծը փոխեցին եւ եկան իրենց հարստութիւնները պարպել ասորական նաւահանգիստներէն աւելի դէպ ի հիւսիս գտնուող նաւահանգիստներու մէջ, եւ հայկական նաւահանգիստներն այդպէսով շատ մեծ կարեւորութիւն մը ստացան:

Փոքր Հայաստանի թաղաւորութիւնը իրեն բնական թշնամի ունէր իր ամենամօտ գրացիները, Բեդլանդական կայսրութիւնը եւ Մահմետական աշխարհը: Ուստի բովանդակ միջին դարուն Հայոց քաղաքականութիւնը եղաւ՝ փրանկներուն վրայ կրթնելով Բիւզանդացիք եւ Թրքացիք կոտելով: Սաշակրաց եւ

Հայոց միջև մէկ քանի անձամբաձայնութիւններ պատահեցան մերթ մերթ ալ վաղանցուկ մերձեցումներ Հայոց եւ Յունաց միջև, բայց ատոնք միշտ կարծատե եղան. այսպէս Պաղպլին (Պոտոլին) թորոս հայ իշխանին ձեռքէն առաւ նոյնքան եւ հոն իմնեց Եգիպտան հոչակաւոր իշխանապետութիւնը: Բայց Հայերը իրենց չանքը կ'ըմբռնէին. թեւարաց ընդունեցան կոտորուած արՊուլոնն ու իր բանակը. Անտիոքի երկարատե պառչումն միջոցին, Հայերը Առաջակիրներուն հասուցին ամէն տեսակ պաշար եւ մթերք:

Պէտք չէ մոռնալ որ եթէ Առաջակիրները ալ աւելի չտառապեցան, երբ շատ տեղ վճռական եթէ ոչ վերջնական յաջողութիւններ ունեցան քրիստոնէութեան դատին համար՝ Արեւելքի մէջ մեծ մասամբ առի պարտական եղան Փոքր Հայաստանի մէջ իրենց գրած աջակցութեան եւ օգնութեան:

Միջին դարուն, Հայերը միայն քաղաքական յարաբերութիւններ չէ որ ունեցան Եւրոպայի հետ: Ունեցան նաեւ առեւտրական յարաբերութիւններ, մանաւանդ ձեռնովար հետ, Արեւելքի եւ Արեւմուտքի միջև փոխանակւող ալիւանայ նիւթերու փոխադրութեան համար. անուշ ջրի նաւահանգիստները իրենց կարեւորութիւնը կորսնցուցին ու երկար տարիներ՝ վաճառականութիւնը կեդրոնացաւ Այասի նաւահանգիստին մէջ, որ բարգաւաճութեան արօրինակ աստիճանի մը հասաւ:

1201ին, Օճերիօ աի Փալլօ, Ճենովաի դիւպանն ի Հայաստան, Սիսի եւ Մամեստիաի մէջ վաճառատուններու մենաշնորհ ընդունեցաւ՝ սահնարնդարձակ առանձնաշնորհութիւններով, աւելի յետոյ Ուլիօ Ֆերրարի Հայոց թագաւորին հետ կը կնքէր դաշնագիր մը որով այս վերջինը Տարսուսի մէջ ձեռնովական երկրորդ գաղութի մը հաստատումը կ'արտօնէր: Վերջապէս, 1211ին, Մարքօ-Փօլօ, Չինաստան իր թաղու համար ճամբայ ելած ըլլալով, Այասէն՝ Կիլիկեան ծովեզերքին ամենէն բարդաւան նաւահանգստէն՝ անցաւ. հոն դուռ ձեռնովացիներու գաղութ մը հարուստ եւ շատ հանգիստ. ատոնք Այասը կերպարանափոխած էին գրեթէ եւրոպական քաղաքի մը, աւելի ձեռնովական քան թէ հայկական, եւ հոն կեդրոնացուցած էին Արեւելքի ամբողջ վաճառականութիւնը:

Վաճառականութեան, ինչպէս որիչ բանե-

րու մէջ, անկուտը շատ մոռնն կը յաջորդէ յաջողութեան գերազոյն կէտին: Ձեռնովացի ծովակալը Պենետէթթօ Զաքարիա, դարձեալ կնքած էր Լեւոն Բ. ին եւ Հեթում Բ. ին հետ իր հայր նակիրներուն համար շատ օգտաբեր պայմանագրութիւններ, թերեւս աւելի օգտաբեր քան նախորդները, բայց ձեռնովացիք ինչպէս Հայերը շատ հարստացած էին, է՛նչպէն այլեւս վայելել դիզուած հարստութիւնները եւ անցեալ դատանքը մոռնալ. ներքին զգոտութիւնները ամէն կողմէ կը պայթին: Ձեռնովացի եւ Վենետիկի միջև հակառակութիւնը կը շեշտուի. անկուտը կը հասնի մեծաքայլ Եգիպտացիք կը դրուեն Այասը եւ Փոքր Հայաստանի թագաւորութիւնը կը փառանայ, մինչեւ որ վերջապէս կը կործանի 1375ին: Վերջին թագաւորը, Լեւոն Զ. Գահրէ գերի կը տարուի, յետոյ Թրանսա կուգայ եւ Սէն-Տընի եկեղեցիին մէջ կը թաղուի ու իր արտոնքը կ'անցնի Կիպրոսի Լուսինեաններուն:

Այս մէկ քանի նկատողութիւնները մեզ ուղղակի կ'առաջնորդեն պ. Էրնսթ Լոհմանի գործին:

Պ. Լոհման Գերմանացի է, Սուլթան Ապաիւլ Համիտի յայտնի բարեկամ Վիլհելմ Բ. ի հպատակ. բայց ամէն բանէ առաջ մարգատէք մըն է որ ուրիշներուն տառապանքովը կը աւսուսակ եւ կը ջանայ զայն ամօքել: Հայաստան մեկնած է, հաւաքած է որբեր որոնց հայրերը սպաննուած կամ վաարուած էին, դպրոցներ, որ բանոցներ եւ հիւանդանոցներ հիմնած է ուր ապաստանած են դժբաղդ փոքրիկները:

Մարգասիրական գործին հետ պ. Լոհման գրքի մը նիւթեղէնները հաւաքեց Հայաստանի այն մասին վրայ զոր այցելած էր: Այդ հաւաքածօ ծոյին առաջին պրակին վրայ է որ պիտի խօսիմ ընթերցողին: Վայելչօրէն ապագրուած լուսանկարչական լաւ վերարտադրութիւններով պատկերազարդուած այդ պրակը գեղեցիկ ապագայ մը կը խոստանայ բազմաթիւ գործին. արտոնքն է հետեւեալը՝ «Սիսի վանքին մէջ, —նպաստ մը գերման կուցարութեան ու Հայաստանի միջև Միջին Բաւրուն գոյութիւն ունեցած յարաբերութեանց պատմութեանը»: Ծամբորդներու պատմութիւններուն չվտանկելով, պ. Լոհման օր մը ելած գացած է Մերսին՝ Տարսուսի եւ Կիլիկիոյ նաւահանգիստը. այդ տեղուանքն է որ վերջերս պարզուեցան Մարաշի արիւնոտ ողբերգու-

Թիւնները ու տեղի ունեցաւ Զէյթունի բնակիչներուն դիւցազնական դիմադրութիւնը :

Ամենամեծ շահեկանութիւն ունեցող քոնի մը գլուխներու մէջ, պ. Լոհման մեր աչքին առջեւէն կ'անցընէ անցեայ օրերու տեսարաններ, զոր մարդ հաճոյք կը զգայ պատմութեան պրիմալին մէջէն վերատեսնելով («Վանքին մէջ, — «Հայկական պատմութեան հատուած մը», — «Սաչակիրք եւ Հայք», «Պատկում մը, կիրիկիոյ Տարսոն քաղաքին մէջ 1198ին», «Ներսէս, Տարսոնի արքեպիսկոպոս» «Կերմանական պատուիրակութիւն մը Ի Հայաստան 1212ին») :

Անցողակի մասնանիչ պիտի ընեմ քանի մը կէտեր: Մուհամմէտի մահուանը միջոցին (632), տարաբա միայն կը հպատակէր մահմետականութեան: բայց յաջորդ սերունդին առաջին չորս խալիֆաները Ասորիքին, Եգիպտոսին եւ Պարսկաստանին տիրած էին արդէն: Դարերէ ի վեր այս վերջինը Հայաստանի վրայ գերիշխանութիւն մը ունէր եւ 637ին երբ էսմէրի մզկիթը կառուցուեցաւ Երուսաղէմի հինաւուրց տաճարին տեղը, այդ նոյն տարին Սարակինոսները Հայաստանը իւրացուցին՝ երկարատեւ արիւննոս պայքարէ մը յետոյ: այդ օրէն սկսաւ Հայաստանի համար հարստահարութեան եւ գերութեան թուական մը:

Ուրիշ թշնամի մը որուն հետ Հայաստան օտարուած էր մաքաուի, Բիւզանդական կայսրութիւնն էր: Մէկ կողմէ մահմետական աշխարհին ու միւս կողմէ օրթոտոքս աշխարհին մէջտեղը զետեղուած: հայկական թագաւորութիւնը այդ երկու դրացիներէն ալ շարունակաբար նեղութիւն քաշեց: եթէ Սարակինոսներուն հետ խաղաղութիւն կնքէր, կը ստիպուէր Բիւզանդական կայսրութեան յարձակմանը դիմադրել, ու փոխադարձաբար:

Յետոյ, երբ Սաչակիրները Փոքր-Ասիայէն սնդան, նախ քանի մը ընդհարումներ տեղի ունեցան կիրիկիոյ Հայոց եւ Արեւմուտքի Գրիտոնեանեւուն միջեւ, բայց վտանգը որ երկուքին ալ կը սպառնար գրեթէ չուտով իւրարու մօտեցուց. (ամենէն մեծանուն խաչակիրներէն շատերը Հայաստաններու հետ ամուսնացած ու Երուսաղէմի գրեթէ բոլոր թաղուհիները՝ ժի Դարուն՝ հայ իշխանուհիներ եղան):

Մատթէոս Առնայեցի կը պատմէ թէ ինչպէս հայազգի իշխան Լեւոնը, Կոստանպին Ա. ի որդին, Անտիոքի իշխան Ռոթէյ օգնութեան հասաւ: այդ ի տես ընեմ, խաչակիր զինուորներ

որուն հետ մէկտեղ, Սարակինոսներուն դէմ մարտնչեցան: Պատերազմի միջոցին Լեւոն առիւծի պէս կը մոնչէրեւ իր զինուորներուն հետ բուն յարձակում գործելով թշնամոյն վրայ, զայն ի փախուստ դարձուց հալածելով մինչեւ քաղաքին դուռը՝ շատեր սպաննելով:»

Պայքը եւ Գեւմանիոյ կայսրը կը յուսային որ Ս. Երկրին տիրացումը չուտով պիտի աւարտէր: շատ կ'ուզէին Հայաստանը իրենց հետ ունենալ իրենց զինուորական գործողութեանց հիմը այնտեղ հաստատելու համար: 1185ին Դրիդոր-Ալիբատ կաթողիկոսը Լուկիոս պապէն ընդունեցաւ նամակ մը եւ խոյրը, եւ հինգ տարի յետոյ երբ Փրեմերիք Պարպրուս Անատոլիէն կ'անցնէր, Լեւոն թագաւորը դարձեալ պոչար հասցուց խաչակիրներու սովատանջ բանակին: Սաչակրաց եւ Հայոց միջեւ այս բարեկամական յարաբերութիւնները աւելի ամրապէս պիտի վաւերացուէին եւ հաստատուէին կարեւոր դէպքով մը: Փրեմերիկ Պարպրուս մտադիր էր Տարսոն պալ մեծաշուք հանդիսա որութեամբ Լեւոնը թագաւոր պսակելու համար: Մնացեալը ծանօթ է Փրեմերիք կ'ուզէ ձեռով անցնիլ կալիկատանոսը եւ ջրախեղդ կ'ըլլայ:

Այդ թուականին ամենէն շահեկան դէմքերէն մէկը Ներսէս Լամբրոնացին է. իշխանական տոհմէ էր. կղերական ասպարէզն ընդգրկեց ուր կրցաւ խաղալ դեր մը միանգամայն քաղաքական եւ կրօնական: Մտքի մեծ լայնութեան մը ապացոյցը տուաւ: Չանադիր եղաւ քրիստոնէական այլեւայլ եկեղեցիներո հայկականը, ասորականը, զպտիակաւը, յունականը եւ լատինականը՝ միացնել: Իր նամակներէն մէկուն մէջ կը գրէ. «Ինծի համար հայը լատինին նման է, լատինը յոյնին նման, յոյնը զպտիին կամ ասորիին նման:»

Քանի մը անդամ Ներսէս իբրեւ զեսպան զրկուեցաւ բիւզանդական արքունիքը: Ատկից զատ մեծ ճամբորդութիւն մ'օրրաւ Գերմանիա, կայսեր հետ տեսակցելու համար. «կը յուսար որ Արեւելքի քրիստոնեայ եկեղեցին պիտի զօրանայ իր միութեամբը (Հոովմ'ն հետ)»: կ'աշխատէր ամէն բանէ առաջ որ ինչ եկեղեցին միանար Հոովմի: Այս գործին մէջ կը վաշելէր բովանդակ աջակցութիւնը կաթողիկոսին (Շնորհալի) եւ Լեւոն թագաւորին. եւ հակառակ այս ամենուն, հայ եկեղեցոյն մէջ

չատ ուժեղ գի՛ւտգրութիւն մը գտաւ, որովհե-  
տեւ շատերը կը վախնային որ այդ միութեան  
փորձը իրեն արգիւնք պիտի ունենար հայ ե-  
կեղեցւոյն յատուկ եղող ձէսերուն ու սովո-  
րութիւններուն ջնջումը . վարդապետական  
խնդիրները շատ քիչ տեղ կը բռնէին վէճին  
մէջ :

Պ. Լոհման այցելած է Կիլիկիոյ գլխաւոր մա-  
սերը . նախ Այսար, որ՝ ինչպէս ըսինք՝ վաճա-  
ռականական մեծ յարաբերութիւններ ունէր  
ձենն / ի եւ Վենետիկի հետ . այն բերքերը որ  
անկից Եւրոպա կը բերուէին, էին գլխաւորա-  
պէս ձէթ, խաղող եւ ուրիշ պտուղներ . անկից  
է որ ձիթենին փոխադրուեցաւ Իտալիա, յետոյ  
Փրովանս :

Պ. Լոհման այցելած է նաեւ հայ թագաւոր-  
ներու բնակարանը՝ Անարզատ, որուն աւե-  
րակները սքանչելի կերպով պահպանուած են :

Անարզատայէն դէպ ի հիւսիս ուղղուելով,  
պ Լոհման կը հասնի օր մը Տաւրոսի ստորոտը  
հովտի մը բերանը ուր կը գտնուի Սիս, Հայոց  
թագաւորական մայրաքաղաքը : Մօսը, Դրա-  
զարկի վանքը, որ վեհարանն էր, 1212ին 1441  
հոտ կը բնակէր կաթողիկոսը, հայ եկեղեցւոյ  
գերագոյն պետը, 1212ին, մկրտութեան տօնի  
Դրազարկի վանքը Գերմանացի հիւրեր ունե-  
ցաւ՝ պատարագին ներկայ : Վիլիպրանտ  
տ՝ Օլտէնպուրկ, Հիշտէշհայմի եպիսկոպոս, Գեր-  
մանիոյ կայսեր կողմէ մասնաւորապէս զըր-  
կուած էր ինքնագիր նամակ մը տանելու Լե-  
ւոն թագաւորին : Գերմանացիները կը նկա-

տեն որ բոլոր Հայերը լատիններն կը հասկը-  
նան ու կը խօսին . Լեւոն թագաւորը հրամա-  
յած էր որ բոլոր մանչերը, տասերկու տարե-  
կան հասակնուն սկսեալ պէտք է լատիններէն  
սորվին :

հայ վանականները հպարտութեամբ ցոյց կու-  
տան իրենց մագաղաթի վրայ գրուած դեղիցիկ  
անետարանները . բայց վանքին ճշմարիտ գան-  
ձը Գրիգոր Լուսաւորչի աջն է :

Վիլիպրանտ եպիսկոպոսը հիացմամբ կը  
նկատէ Հայոց բարեպաշտութիւնը . իր յու-  
շատերին մէջ կը գրէ . «Հայերը շատ բարե-  
պաշտ մարդիկ են եւ պատուական քրիստո-  
նեաներ, որոնք ճիշդ ու ճիշդ կը կատարեն  
այն հրամանները զոր ըն աւնած են Ս. Գրիգոր-  
րէն . շատ ամուր են իրենց հաւատքին մէջ  
եւ իրենց մայրական լեզուովը կ'երգեն սաղ-  
մոսներն ու շարականները :

Պ. Լոհմանի գիրքը կ'աւարտի քանի մը յա-  
ւելուածներով որոնք կը ձգտին հաստատել  
գործին մարմնոյն մէջ յայտնուած գաղափար-  
ները . ճշմարիտ պատմաբանի գործ է որ կը  
կատարէ հեղինակը, իրողութիւններ յիշա-  
տակելով . եւ պատմութիւնը ընդհանրապէս  
բաւական պերճախօս է ինքնին երբ կամաւո-  
րապէս խեղաթիւրուած չէ : Մեծապէս ախոր-  
ժելի է տեսնել որ պ. Լոհմանի պէս հմուտ  
անձ մը հայանպաստ շարժում մը կը ջանայ  
յառաջ բերել երկրի մը մէջ ուր բարձրագոյն  
չրջաններու համակրութիւնը հալածեալներուն  
կողմը չէ :

ՖՐԷՏԷՐԻՔ ՄԱՔԼԷՐ

ԷՕՄԷՐ ԽԱՑԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ

ԽԲ

Ով որ Սէրէն թերթ մը սրտին վրայ պատուաստեց,  
Իր կեանքէն մէկ օր մը վասնուած շանցուց,  
Կա՛մ Աստուածոյ արքայութիւնը խնդրել կը ճգնի,  
Կա՛մ մարմնոյն գիւրը կ'ընտրէ եւ գինիին բաժակը կը վերցնէ:

ԽԳ

Ամենուրեք ուր վարդի կամ կակաչի ածու մ'եղած է,  
Արքայական արիւնի կարմիրէն եղած է,  
Ամէն ընձիւղ մանուշակի որ գեանէն վեր կ'երեւի,  
Մին է որ գեղուհիի մը երեսն եղած է:

ԽԴ

Զգոյ՛ն եղիր, զի կեանքն անստոյգ է,  
Անքոյթ մի՛ նստիր, զի բաղդին սուրը հատու է,  
Եթէ բերնիդ մէջ բաղդը նուշանոյ՛ն զնէ  
Զգոյ՛ն եղիր, մի՛ կուլ տար զի թուհախառն է:

ԽԵ

Շիջ մը գինի եւ սիրականին շուրթը եւ արտին շուրթը,  
Այս ամէնն ինձի կանխիկ եւ քեզ ապառիկ դրախտը  
Ոմանք դրախտի կամ դժոխքի կապուած են  
Ո՞վ զնաց դժոխք կամ ո՞վ եկաւ դրախտէն:

ԽԶ

Ո՞վ դու որուն այտը ձեռուած է ինչպէս վայրի վարուր,  
Որուն երեսը թափուած է ինչպէս Չինի կուռքեր,  
Երէկ քու սիրարկու նայուածքդ Բարեւոյնի Շահին տուաւ  
Ասպետն ու Դղեակն ու Փիղը ու զօրքերու թագուհին:

ԽԷ

Քանի որ ամէն կեանք կ'անցնի, ի՞նչ է Պաղատա ու ի՞նչ է Բալն,  
Երբ բաժակը լեցուն կ'ըլլայ, ի՞նչ է անուշ կամ ի՞նչ է դառն,  
Գինի խմէ, զի ինչ ու քե՛նէ հտքը այս լուսինը պիտի անցնի  
Վերջին օրէն առաջին օրը ամսուն, եւ առաջինէն վերջինը:

ԽԸ

Անոնք որ արմաւի անապակ զինին կը քաշեն  
Եւ անոնք որ զիչերն ի բուն Մեհրապն են ազօթքի՝  
Աանոնցմէ ոչ մէկը ցամաքը չէ, ամենքն ալ ջուրին մէջն են։  
Մին արթաւն է, միւսները քուն են։

ԽԹ

Այն միտքը որ Երջանկութեան ճամբուն մէջ հետախոյզ կը շքլի  
Օրը հարիւր անգամ ինքը կ'ըսէ քեզի՝  
« Խելամուտ եղիր ժամանակիդ այս մէկ վայրկեանը  
Թէ չես դուն այն խոտը որ կը հաւքուի եւ վերստին կը բուսնի։ »

ԷՍՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ.  
Գ. ՓԱՌՆԱԿ

### ԿԱՌԱՐՁԱԻ

Տե՛ս, նենգաւոր ու խուլ ու թաց քու քարայրիդ մուտքին վերեւ  
Կառք ճը որուն բոցածածանչ անիւներն են երկու արեւ  
Եւ սանձերն ալ՝ հուր փայլակներ բունվարող ամպէ ահեղ,  
Ամպէ մրրկոտ երիվարներ որոնց կուրծքին ներքեւ հեղեղ

Ու բաշերուն վրայ ովկեան կը մըռընչեն, տե՛ս, ս'վ նախկին  
Արքաներու ինքնամոռաց հըզօր սերունդ, ըզքեզ կրկին  
Կը կանչէ կառքն արչաւներուն... Մ'ն, խոյացի՛ր եւ թող ճամբան  
Քեզ առաջին տեսնէ կարող հորիզոնները անխափան...։

Կը բարձրանայ մինչեւ երկինք փոշին պեղած աղօսներուդ  
Որուն ետին վարագուրուած ախոյաններդ կը գալարուին...  
Դուն, անմոլոր, քու Ուժերուդ մըղէ՛ երամը խըմբովին։

Եւ պատահի եթէ երբեք արահետի մը մէջ ժեռուտ  
Որ նետէ վար քեզ նախանձին կամ զիպուածին ձեռքն անպատեհ՝  
— Սուրա՛ կառքիդ շուտ ետեւէն, 'ւ անիւներէն վայն, պինդ, կապտե՛՛

Վ. ՏԻՐԱՆԵԱՆ

### ՔՐՈՆԻԿ

Ի նպաստ Ձեյթունի հանգանակութիւնը. — Ծեծ ուրախութեամբ կը նկատենք որ Ձեյթունի ի նպաստ մեր կոչը անարձագանք չմնաց :

Փարիզի Հայոց հոգեւոր հովիւ տէր Վոամ- շապուհ քահանան, Ձատկի կիրակի օրը, հայ- կական մատուռին մէջ ժողովրդին պարզեց այդ հարցը եւ ծանոյց որ մասնախումբ մը պիտի կազմուի՝ Փարիզի Հայոց մէջ այդ նպաստ- կով հանգանակութիւն մ'ընելու համար. ներ- կաներէն ոմանք արդէն այդ օրն իսկ փու- թացած են հանգանակութեան մասնակցելու. եւ 350 ֆրանքի շափ գումար մը գոյացած է. մասնախումբը պիտի կազմուի այս օրերս, ա- ջակցութեամբ Փարիզի Հայոց թաղական խորհրդին, որ այս հանգանակութեան զուտ մարդասիրական հանգամանքն ի նկատի ունե- նալով, իր բոլոր օժանդակութիւնը խոստա- ցած է :

Փարիզարնակ քանի մը անձնաւորութիւն- ներ արդէն գումարներ զրկած են Վոամշա- պուհ քահանային. ամբողջական ցուցակը պիտի հրատարակենք « Անահիտ » ի յաջորդ թիւով :

Իտալիայէն խումբ մը Հայեր զրկած են Վոամշապուհ քահանային 31 ֆրանք :

Աղեքսանդրիայէն մեզի զրկուած նամակէ մը հաճոյքով կ'իմանանք թէ այդ քաղաքին հայ երիտասարդութիւնը, Ձեյթունի Հայու- թեան թշուառ կացութիւնն ամոքելու նպա- տակով, կազմած է ընկերութիւն մը որ պիտի ձեռնարկէ լուրջ ջանքեր՝ կարեւոր գոյւմար մը ձեւացնելու համար. այդ ընկերութեան մասին, որու կազմակերպիչներն քրթանի են ամէն գովեստի, « Անահիտ » ի յառաջիկայ թիւով ա-ւելի մանրամասնօրէն պիտի գրենք :

Վառնայի հայ երիտասարդութիւնը զիմած է տեղւոյն թաղական խորհուրդին, առաջարկե- լով հանգանակութիւն մը բանալ ի նպաստ Ձեյթունի որբերուն. թաղական խորհուրդը օրոշած է բանալ հանգանակութիւն մը, ու Ձատկի օրը Վառնայի հայ մատուռին մէջ ծա- նուցում մ'ընել այդ հանգանակութեան մասին :

Կ'իմանանք որ Անգլիոյ Հայերն ալ նմանօ- րինակ հանգանակութիւն մը սկսած են :

Նիքոսիայէն (Իպրոս), հայրենակից մը մեզի կը գրէ հետեւեալ նամակը՝ 16 ապրիլ թուականով, որ մէ կ'իմանանք ոչ միայն

Ձեյթունի ի նպաստ կրպոսի հայ գաղթա- կանութեան մէջ սկսած շարժումը, այլ եւ այդտեղի Հայութեան մէջ հայկական փայլուն տաղանդի մը ուրախաօրիթ յայտնու- թիւնը (որու մասին ուրիշ թղթակիցներ ալ գրած էին մեզ վերջերս) :

« Անահիտ » մէջ եղած առաջարկը կարգաւոր ի նպաստ Ձեյթունի, ձեռնարկեցի հանդէս մը եւ հանգանակութիւն մը կազմակերպել տեղ-ւոյս առաջնորդ վարդապետը յանձն առաւ նա- խագահել հանդէսին. կազմակերպ յանձնա- խումբ մը որուն ղլխաւոր անդամներն են վարդապետը եւ պ. Միհրան Սվազեանը. հանդէսը պիտի կատարուի տեղւոյս եկեղեցիին մէջ Ձատկին մեռելոցին իրիկունը. պիտի մասնակցին օրիորդներ աիկիւններ, կղերա- կաններ, փաստաբաններ :

Նշանակելի է եւ խիստ հաճոյալի տեղւոյս ժո- ղովրդին համար՝ տիկին Սվազեանին երգելու խոստումը, որուն համար անհամբեր կը սպասէ ժողովուրդը. տիկին Սվազեանն առաջնակարգ տաղանդ մըն է իր արուեստին մէջ մէկ խօս- քով գունձ մըն է որ պահուած է այս ամայի կղզիին մէջ. եթէ ուզէր եւրոպա անցնիլ ու երգել մեծ կեդրոններու մէջ, Հայութիւնը կրնար պարծենալ այսպիսի գեղարուեստական ուժով մը :

Պ. Մանքաշեան եւ Էջմիածնայ վանքի. — Թիֆլիսի թերթերէն կ'իմանանք որ Պ. Ման- թաշեան խոտադեր է ամենայն Հայոց կաթո- ղիկոսին՝ 150,000 ռուպլի նուիրել էջմիած- նայ վանքին վերանորոգման համար, 1600 ամեակի տօնին առթիւ :

### ՎԵՃԻԿԹԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԿՈՐԾԸ

Նկատելով որ Վեյիկթաշեանի կենսագրու- թիւնը, քերթութեամբներն ու ճառերը պարունակող շ հատորները, որոնց համար բաժանորդագրու- թիւն բացած ենք, շատ աւելի ընդարձակ ծաւալ պիտի ունենան քան ինչ որ կը կարծէինք ի սկզբան. — Իւրաքանչիւր հատորը « Բույսակի դիւան » ին ծաւալը պիտի ունենայ, — որոշեցինք Հիւնի ֆրանքի բարձրացնել կրկու հատորին բաժնեկիւնը, փոխանակ եւս ֆրանքի ինչպէս առաջ ծանուցած էինք : Եւ նախ որ մինչեւ դարդ բաժանորդ գրուած եւ երեք ֆրանքը զրկած են պիտի ընդօգնին երկու հատորը երեք ֆրանքի փոխարէն : Անոնք որ այսուհետեւ բաժանորդ պիտի գրուին, պէտք է վճարեն Հիւնի ֆրանք (փոխթայի ծախքն ալ մեր վրայ հաշուելով) : Հրատարակութենէն յետոյ երկու հատորները պիտի արժեն վեց ֆրանք :

### ՎԵՐՋԻՆ ԲԱՌ ՄԸ

Յեղափոխական մարմիններու միացման խնդրոյն վրայ հրատարակած շարք մը յօգուածներուս վերջինը կ'աւարտէր՝ Հնչակեան երկու հատուածներուն միացումին բերկրագին ծափահարկով եւ յոյս յայտնելով որ այդ միացումին պիտի յաջորդէր ընդհուպ — հակառակ լղրճուկ «Մխիթար»ին բոլոր էնթրիկներուն — Դրօշակեանց եւ Հնչակեանց ընդհանուր միացումը։ Մտքի սրամազրուծիւնը որ այդ ուրախութիւնն եւ այդ յոյսն ինծի կը ներշնչէր. կը բղխէր յեղափոխական լուրջ գործունէութիւն մը մեր բոլոր պործօն ուժերուն միացմամբ միայն կարելի նկատելու համոզումէս։ — Այդ համոզումս, պէտք է խոստովանիմ, զիս մղեր է Փայրայից լաւատեսութեան մը. իրս զուժիւններն այսօր կ'ապացուցանեն թէ ո՛չ ուրախութիւնս հիմնաւոր էր. ո՛չ յոյսս Խարուած ըլլալէս խորապէս ցաւ կը զգամ, բայց երբե՛ք ամօթ։ Այդ ուրախութիւնն ու այդ յոյսը ցոյացումն էին ազնիւ ու ամուր հաւատքի մը. — ու մարդ մը շտ իրաւունք ունի հպարտ մնալ իր հաւատքներովը՝ որքան ալ անոնք պատրանքի վրայ հիմնուած ըլլան։ Այո՛, ազգին ողբալի կացութիւնը նկատի ունենալով եւ խորապէս կը հաւատայի թէ մեր յեղափոխական հատուածները վերջապէս գուժ պիտի ունենային, պիտի ոսնակոխ ընէին քնտրի ներքին զձուձ վէճերը եւ պիտի փութային ձեռք կարկառել իրարու։ Կարգ մը իրողութիւններ մեծապէս կը նպաստէին այդ հաւատքս ամրացնելու. «Դրօշակ»ն ու «Նոր Կեանք»ը ու նոյն իսկ «Հայրենիք»ն ու «Ձայն Հայրենեակ»ը, զազրեցուցած էին կուսակցական բանակներու հրատարակումը. Վեր Հնչակեանց միութեան բացարձակապէս անկեղծ փափաքը՝ ծանօթ, ապացուցուած, արեւու պէս պայծառ էր ինծի համար, եւ կը կարծէի թէ ատի կարեւոր տարր մըն էր ընդհանուր միութիւնը յառաջ բերելու համար։ Օսմանցի Ազատականներու համաժողովին մէջ, Հնչակեան պատգամաւորները տասն անգամ ինքնաբերութար միութեան հարցին վրայ խօսք բացին Դրօշակեան պատգամաւորներուն, մանաւանդ պ. Սիսեանին, յայտարարեցին թէ հնչակեան

կուսակցութիւնը իսնդավառօրէն փափաքող էր Միութեան։ (անդրեցին պ. Սիսեանէն որ ժընէվ դարձին հաղորդէ այս յայտարարութիւնները Արեւմտ. բիւրօին եւ ուղղակի բանակցութեանց սկսման գաղափարին հակեցնելը ընկերները. պ. Սիսեան որ բոլորովին անիմաստ կը գտնէր Մխիթարի «գոռով միջնորդ» մնալու յամառութիւնը, խոստեցաւ աշխատիլ ուղղակի բանակցութիւնները փութացնելու։ Այս բոլորը չէին կրնար յուսալ շտալ. մէկու մը մասնաւանդ որ կ'ուզէր յուսալ, թէ Միութեան անհրաժեշտութիւնը վերջապէս պիտի ըմբռնուէր ամենէն եւ անոր իրականացումը շուտով աեղի պիտի ունենար։ Գիշ ատենէն Հնչակեան երկու հատուածներու միացումը կատարուեցաւ, — իրողութիւն մը որ անօրինակ ոգեւորութիւն յառաջ բերաւ հայ ժողովրդին ստուար մէկ մասին մէջ, եւ իմ յոյսերս աւելի եւս ամրացուց։ Բայց ահա յանկարծ, «Դրօշակ»ը հրատարակեց «Մխիթար»ի ապիրատ «վերջին խօսք»ը, որ վիճը վերաբանալու միակ նպատակն ունէր, եւ յաջողեցաւ ալ իր այդ նպատակին հասնելու։ Ատի արդէն շատ ուժեղ հարուած մըն էր իմ յոյսիս արուած։ Յոյսս, սակայն, աւելի ուժեղ էր քան հարուածը. չկործանեցաւ։ Ու, գայրոյթս յայտնելով հանդերձ «Մխիթար»ի վատ արարքին եւ Արեւմտ. բիւրօին ցաւալի մեղսակցութեան նկատմամբ, յոյսս ու հաւատքս անդրդուելի պահեցի Միութեան՝ հակառակ ամէն բանի՝ անխուսափելի եւ մօտալուտ յաջողմանը մասին։

Այս բոլորը երազ մըն են եղեր։ Իրականութիւնը չուշացաւ իր բիրտ ու աղտոտ մատներովն այդ երազը բզկտելու։ Եւ ի՛նչ իրականութիւն... արհաւիրք մը ամբողջ...

Այսօր Դրօշակեանց ու Հնչակեանց միջեւ կոիւր առտուել քան երբեք կատաղի է դարձած մանաւանդ Ամերիկայի եւ Պուլկարիոյ մէջ։ Հնչակեան միութիւնը խախտեցաւ նոր կեդրոնին մէջ հին Հնչակեան հատուածը ներկայացընող վարիչներուն դաւաճան ընթացքովը։ Միութեան բանակցութեանց միջոցին, կարգ մը պայմաններու հետ, որոշուած էր նաեւ որ նապարհէկեան ու Արփիարեան այլեւս ո եւ է զեր պիտի չունենային Հնչակեան գործունէութեան մէջ. Նոր Հնչակեանները իրենց խոստմանը հաւատարիմ մնացին, շարունակելով Հնչակեան ո եւ է գործունէութիւնէ հեռու պահել Արփիարեանը, զոր Միութիւնէն առաջ ար-

դէն արտաքսած էին, Հին Հնչակեաններու վարիչները, երեսանց «Ֆրացած» ձեւանալով հանդերձ, մութին մէջ հերձուածական «գի մր կը պահպանեն միշտ, «մասնաւոր ծրագիր մը կը սնուցանեն, այն է վեր. Հնչակեաններու բոլոր նիւթական ուժին տիրանալէ յետոյ, անոնց վարիչները դուրս նետել եւ դարձեալ նազարբէկեանը բերել Հնչակեանութեան գլուխն անցընել. հին Հնչակեան վարիչներէն միոյն, պ. Արզումանեանի՝ մէկ նամակը, զոր «Ռաուուք» հրատարակեց վերջերս, այդ թաքուն ծրագիրը սմենայն յստակութեամբ երևան կը հանէ. «Թէ ինչ ծրագիր ունինք, առայժմ ոչինչ չեմ գրել, մինչեւ որ մեր Ամերիկայի ներկայացուցիչը տեղը հասնէ. զուր նորան հետ կը խորհրդակցէք ձեր գործունէութեան մասին. Անր ամենախախտեց տեղը Ամերիկան է («մեր ըսելով, «հին Հնչակեանները» ըսե. կ'ուզէ՛հա. կատակ Միութիւնը որպէս թէ խանդավառութեն ընդունած ըլլալուն» — վասն զի ընդհակառակն Հնչակեաններու ամենազօրեղ կողմաններէն մէկն է Ամերիկայի Հայութիւնը), որի համար մասնաւոր ջանքով եւ վերջին ծայր խոհեմութեամբ պէտք է գործել. . . . Այխատեցէք զըլխաւորապէս տեղւոյդ վերակազմեալ ընկերներին հետ միասին կամ աւելի լաւ է նրանց կողմից մի ընկերական հանրագրով պահանջ ներկայացուի կեդրոնին. «Հնչակ»ում մեր «Աւօ»ի (այսինքն նազարբէկի) աշխատակցութեան համար. այդ մասին ուրիշ տեղեր էլ եմ գրել. . . . Կրք պահանջները դրսից կ'զան, հարցը լաւ ընթացք կուտայ. »

Վեր. Հնչակեան վարիչները, այս նպատակը ձեռք ձգելով, նկատելով միանշամայն որ իրենց հին Հնչակեան ընկերները սիստեմաբար արգելք կ'ըլլան ու եւէ գործ տեսնելու եւ «Ֆրացած» ձեւանալով «անգերձ» անջատ ու օտար մարմնոյ մը ներկայացուցիչներուն պէս կը վարուին իրենց հետ, կը հրաժարին. Հնչակեան բոլոր մասնաճիւղերը կը մերժեն այդ հրաժարականն ընդունել, կը խնդրեն, կը պահանջեն որ այդ վարիչները վերստանան իրենց պաշտօնը եւ կը հրահանգեն որ հին Հնչակեան դաքարիները՝ արտաքսուին Հնչակեանութենէ. նոր Հնչակեանները կը համակերպին Հնչակեան մեծամասնութեան այդ բազմանքին, չբաց չընչակեանութեան վարիչին շինասելու նկատուածով մը՝ կը զգուշանան այդ ցաւալի ներքին սքանտալը հրապարակ հանելու փութալէ. հին

Հնչակեան դաւադիրները «զող կայ» պոռալով ուշադրութիւնն իրենց վրայէն հեռացնել ջանացող գողերու պէ. . . կ'ածապարին իրենց նոր Հնչակեան ընկերներուն վրայ տմենէն զգուշի, ամենէն ապուշ զրպարտութիւնները պարունակող ու սեւէ փաստէ դուրկ հրատարակութիւններով հրապարակը ողորկել. Այս տխուր կացութեան առջեւ, ի՞նչ գիրք կը բռնեն Երօշակեանները. կ'երեւակայէք թերեւս որ այլանդակ դաւր մը զոհ դառնա՞վ էր. Հնչակեաններուն գառն վիճակին վրայ կ'ըստիմուտեանց ձեռք կ'երկը ցնեն՝ խոստմնադրութեան ընդ միասին պայքարելու համար. Ո՛չ. այն Երօշակեանները որ տարիներոյ մաքառած էին նազարբէկեանն ու Արփիարեանը վտարել տալու համար Հնչակեանութենէ, սիրողարար ձեռք կը կարկանեն նազարբէկեանը Հնչակեանութեան գլուխը դարձեալ բերելու ձգտող Արզումանեաններուն. անոնց բոլոր յայտարարութիւններն իրենց թերթերուն մէջ կը հրատարակեն, անոնց բոլոր խենթութեամբ ամբաստանութիւններն իրրեւաւորապէս ճշմարտութիւններ կը ներկայացնեն ժողովուրդին. եւ բոլոր քարերը, բոլոր թուր ու մուրր, բոլոր բանագրանք, ու հայնոյանքն ու անէ՞քը կը նետեն նոր Հնչակեաններուն զըլխուն որ Արփիարեանն արտաքսելու եւ նազարբէկեանին վերադարձն արգելելու, միակ յանցանքը գործած էիք. . . . եւ յատկ կուգայ եղբայրասպտն գգը բաւարարի տխարան մը, որ դեռ կը շարունակուի մոլեգնաբար, այնքան քստմընելի, այնքան աղետաբեր, այնքան ջլատեցնող ու ազգակործան որքանը տակաւին տեսնուած չէր մեր մէջ. . . .

Իմ խեղճ աղւոր երազիս տրուած այս անեղ հարցւածը ամենախորին տխրութիւն մը, զըլուպնք մը եւ վհատութիւն մը բերաւ վրաս. Ինձի թուեցաւ որ այս ազդորմելի դրութեան մէջ ինկած ու անոր մէջ քաշքշուիլ յամառող ժողովուրդ մը կարող էր կ'հար ըլլալ իրագործելու այն վիթխարիօրէն դժուարին ու ամբողջ ազգին բոլոր ուժերուն միահամուռ ու սերտ գոծակցութեամբ միայն կատարուիլ հրացող ծրագիրը, որմէ կախուած է մեր փրկութիւնը (ասի կ'ըսեմ՝ հազար անշամադթելով որ սխալած ըլլաւ, եւ այս բոլոր թանձր աղջամուղջէն նորէն ծագի բազմացուած լոյսը). Ո՛րորչեցի այլեւս չզբաղիլ այդ հարցով.

որ անլուծելի թղթի ու ձեւը կ'առնէր եւ որուն վրայ միտք յողկոյններ ուղեղիս ու ժերնի գուր մտխոյու պիտի համապատասխանէր : Ինծի թուեցաւ որ այս ընթացքով մեր դժբաղդ ժողովուրդին դառն սահմանուած էր լուծուելու ոչ թէ մեր իսկ սեփական ու առնական ճիգին հետեւանքովը : այլ արտաքին ուժերու առաւել կամ նուազ հետադարձ — սքանաճ ու ետական — միջամտութեան «դժբաղդ»-ովը, եւ թէ միակ արդիւնաւոր ու անխուսափելիորէն օգտակար ու սեփական գործ մը եթէ կը մնար նորէն մեր ցեղին մտաւոր արժանիքներն ապացուցանող արտադրութիւնները եւրոպական ժողովուրդներուն ճանչցնելն էր, ինչպէս եւ մեր լեզուին ու գրականութեան զարգացման աջակցելով մեր ցեղին բարոյական ինքնութեան պահպանմանը սատարելը, սպասելով ապագայ փոփոխութեան մէջ տարբեր ու լաւագոյն պայմաններով լուրջ անարդշական վերակենդանացումի մը : Այս տեսութիւնը զիս մղեց վերջնապէս փակուելու գործունէութեան շրջանակի մը մէջ ուր ամէն բան վե՛ն է եւ ոչեւ որիչ : ուր կարելի է գործել անհատապէս, եւ որ արդէն անհունորէն սիրելի է եւ յա մար իմ խա՛նուածքիս : Երոշեցի ինչո՞յն իսկ այլեւս չկարողայ կարգ մը հայերէն թերթեր, որոնց ընթերցումը կարող էր վերջի վերջոյ պարզապէս ջգային հիւանդութեանց առաջնորդել զիս : Այս «թեթիմ» որուն կը հետեւի մաւազան ամբաներէ ի վեր, մտաւոր ու բարոյական առողջապահութեան հոյակապ րե՛ժիմ մը կը թուի հիմա ինծի, եւ հետու եմ զայն փոխելու դիտարութիւն ունենալէ : Բայց այս օրերս բարեկամ մը ուշադրութիւնս հրաւիրեց Պոսթոնի գարշելի «Հայրենիք»-ին մէջ երեւցած երկու յօդուածներու վրայ, մին «Մխիթար»ի կողմէ գրուած, եւ միւսը Վառճանի : Այդ երկու յօդուածները կ'արժեն որ վերջին անգամ մը դուրս ելլեմ, կամ աւելի ճիշդ՝ վար իջնեմ այս բարձրագէտ առանձնոցէն, ճանիճի մէջ նետուած այդ երկու աղաոտ քարերուն մասին քանի մը անհրաժեշտ խօսքեր ըսելու համար :

«Մխիթար»-ինը մեծ պահքի չափ երկայն ու նասրէտտին հոճային արժանի ոճով մը խլու մորուած յօդուած մըն է, որուն մէջ, սուտերու,

խեղաթիւրուներու, սպուշութիւններու եւ անազնութիւններու շեղջակոյտ մը շրջելով, խեղճը կարծած է ինչպիսիքը չքմեղացնել Մխիթարին արգիւղով իր յոտակ ու ապացուցուած յանցանքէն : Այդ յօդուածին մէջ, սը համբուաւոր «վերջին խօսք»-ին նուիրուած լուսապայծառ վերլուծմանս ոչ մէկ փաստին դէմ պատասխան մը, ակնարկութիւն մ'տնդամ ընելէ զըրշացած է «Մխիթար», ուրիշ բան չեմ գրաներ բայց եթէ վնասուած սպասուորի հոգեբանութիւն մը : Ճամբու գրուած միջնորդն է որ ակցայ կը կծրտէ զինքը ճամբու գնողներուն դէմ, — պարագայ մը այնքան հասարակ որքան ծիծաղելի : Այդ անծայրածիր հայհոյաբարի մէջ, «Մխիթար» ամբաստանութիւններ կ'ուղղէ վեր, Հնչակեան կուսակցութեան դէմ ընդհանրապէս, «Վահէ»-ին դէմ մասնաւորապէս, եւ քիչ մըն ալ ինծի դէմ : Իր կատաղութեան ամենէն ստուար մասը կը թափի «Վահէ»-ին գլխուն : Եւ շատ հասկանալի է ատի : «Մխիթար» կը կարծէր թէ «Վահէ»-ն է որ իր ճամբու գրուելուն անձնապէս պատճառ եղած է, մինչդէռ «Վահէ»-ն հոս կուսակցութեան որոշումին գործադրիչն էր միայն : ու մի՛ մոռնաք որ «Մխիթար»ը, որ այդ յօդուածին համեմատ՝ 1900էն սկսեալ արդէն ունի եղեր ապացոյցներ «Վահէ»-ն իբր ամենամտալ տիպար մը ներկայացնող, 1902ին «անձնուէր եւ քաջ գործիչ» կ'անուանէր զայն անոր գրած իր մէկ նամակով, կը բաղձար խանդավառօրէն անոր հետ բանակցել, զայն իր տունը ճաշը կը հրաւիրէր (մարդ աւագակ մը իբր սեղանակից չ'ընդունիր) Մխիթարեան վրայ բանակցելու համար, եւ եթէ «Վահէ»-ն Հնչակեան կուսակցութեան հաւանութեամբ՝ հաճած ըլլար զինքն իբր միջնորդ նկատել, այսօր «Մխիթար» զայն իբր անստիւտ հերոս մը պիտի ներկայացնէր ազգին Բայց «Վահէ»-ն Հնչակեան վարչութեան որոշումը կէտ աւ կէտ գործադրելու յանցանքը գործեց : Կատղած, «Մխիթար» ըսաւ ինծի. «Կամ «Վահէ»-ն զիս պիտի կործանէ, կամ ես զինքը պիտի կործանեմ» : Իր այդ խօսքը կատարել կը ջանայ հիմայ : Չպիտի յաջողի : Մէկ կողմէն կայ պարոն մը որ այս պահուս ուրիշ բան չի ներկայացնիր բայց եթէ գերուկ, եսական, փառամոլ ու ամաւ էսթրիկանի տիպար մը, միւս կողմէն իր ամբողջ երիտասարդութիւնը ազգին համար բոլոր վտանգներուն ու չարչարանքներուն մէջէն մաշեցուցած նիհար, ջգուտ, ու ամբողջ

զոհողութիւնով շինուած հոգի մը այդ ճարպը չի կրնար վնասել այս ջղակոյտին • «Մխիթար» մը չի կրնար կործանել «Վահէն» , որուն չկրցաւ յաղթել տաճկական բարբարոս զրնտանին տանջանքներուն մէջ վաստկուած ահաւոր թոքախտն անգամ : «Գերմարդկային կորով մ'ընի այս անձը . կ'ըսէր ինծի անոր համար տր. Փլիք. պ. Գիյեարի բարեկամն ու բժիշկը , որ դարմանեց զայն • «գրեթէ մահամերձ էր երբ մեկնեցաւ Փարիզէն դէպ ի Ալճերիա, եւ դարձին՝ 2-3 ամսէն՝ արդէն կերպարանափոխուած եւ բուժման ճամբուն մէջ մտած գտայ զայն» : «Մխիթար» ի ակոսայիկ բերանը շատ տկար է այդ կ'ընտրել խաճնելու համար :

Հնչակեան կուսակցութեան ու «Վահէն» ին դէմ «Մխիթար» ի ուղղած ամբաստանութիւններով չպիտի զբաղիմ : Իրենք կարող են պատասխանել , եթէ երբեք հարկ տեսնեն : Բայց իմ մասին յայտնած կարծիքներուն վրայ բառ մը կ'ուզեմ ըսել . որովհետեւ ոչինչ այնքան կ'ապացուցանէ ահաւորանքարոյականութիւնը որո՞ւ մէջ ընկեր է այդ խեղճ մարդը՝ որքան իմ անձիս նկատմամբ յերկրած գիտակից սուտերը :

«Մխիթար» զրա կը ներկայացնէ թրքիւ հնչակեան գործիչ մը, գրեթէ վարիչ մը , Փափագեանի , Արփիարեանի , «Վահէն» ի հօծ ա՛մէն բանի գործակից , այն պահուն ուր ինքը Պուլկարիոյ մէջ իր պաշտօնը կորսնցնելով՝ Փարիզ եկաւ . (Ժրնեմ պահ մը մնալէ յետոյ) : այսինքն 1900ի գարնան . ասի սուտ է , եւ պ . «Մխիթար» ո եւ է մէկէն աւելի գիտէ թէ սուտ է ասի • այդ միջոցին , ինչպէս միշտ , ես ոչ հնչակեան վարիչ էի եւ ոչ իսկ հնչակեան գործիչ • յեղափոխական ո եւ է մարմնոյ հետ պաշտօնական կապ չունէի : Հնչակեան գլխաւոր գործիչներէն ոմանց հետ բարեկամակտն կապեր ունէի միայն • միշտ պահելով անկախ գործիչի զիջքս , ինծի հաճոյք կը սեպէի կրցածս ընել՝ երբ այդ բարեկամներէս մին ինձմէ կը խնդրէր հանրային գործի մը մէջ աջակցութեան բաժին մը բերել իմ միջոցներովս : Համոզելու համար «Մխիթար»ը (Թէպէտ աւելորդ յոգնութիւն մըն է , քանի որ ներքնապէս համոզուած է այդ մասին) , թէ ես վեր . Հնչակեան կամ ո եւ է չին կամ նոր մարմնոյ անգամ չէի . այստեղ կ'ընդօրինակեմ սա քանի մը տողերը Արփիարեանի մէկ յօդուածին զոր «Նոր կեանք» մէջ կը հրատա , ակէր 1900ի յուլիսին • (Ինծի համար հիմա Արփիարեանի ո եւ է մէկ վկայու-

թիւնը , նոյն իսկ ինծի նպատակարար այլեւս բնաւ արժէք չունի , բայց «Մխիթար» , որ , ատենով ամարդասպանէն ու դաւաճանէն աւել սոսկալի ոճրագործ» համարելով հանդերձ Արփիարեանը , հիմա Արփիարեանի նամակներն ու հրատարակութիւնները իբրեւ ճշմարտութեան ազբիւրներ կ'ընդունի , ստիպուած է ընդունիլ իբրեւ անհերքելի փաստ մը՝ Արփիարեանի այս յայտարարութիւնը) . «Անահիտ եւ իր խմբադիրը քաղաքական ո եւ է կուսակցութեան չեւ պատկանիր • բայց՝ եթէ կրնանք այսպէ՛ս ըսել՝ հոգեկան հաղորդակցութեան մէջ են ազգին ստուար մեծամասնութեանը հետ :»

« Հիմա կրնան այն ատենները զգացած զարմացումնին բացատրել տնտնք որ , կը գրէ պ . «Մխիթար» , 189) եւ 1.00 տարիներու մէջ «Անահիտ»էն կ'իմանայի : անազան անուններով ընկերութիւններ , ինչպէս «Փրանքօ-Արմէնիէն» , «Քոմիթէ Սանթրալ» , «Բանտարկեալներու համար ընկերութիւն» • « Հայկական Միութիւն » , ձեռնարկներ որոնք մի եւ նոյն անձերու կողմէ սկսուած , հրատարակուած են , եւ միմիայն անձնամոլական տեսակէտով . — պատուանդան մը տուրնուն տակ ունենալով տէր ըլլալ դիրքի մը : Ազգին բուն շահը դեր մը խաղցած չէ ատոնց մէջ » : Այս բոլորը սուտերու , խեղաթիւրումի եւ ամենասեւ ապերախտութեան բուրգ մը կը կազմեն : Այդ բոլոր յիշուած ընկերութիւնները կամ խմբակները հիմնուած ու գործած են շատ որոշ պայմաններու մէջ , որոշ անձերու ձեռքով , որոշ նպատակներու ծառայած են , եւ օգտակար եղած են ամենքն ալ : Միայն թէ , բաց ի «Փրանքօ-Արմէնիէն»էն . միւս ընկերութեանց հիմնարկութեան մէջ ես դեր չեմ ունեցած . (եթէ դեր ունեցած ըլլայի՝ պարծենալով պիտի հաստատէի զայդ) : Տեսէք ի՛նչ էին այդ ընկերութիւնները . որոնց մէջ «ազգին շահը դեր մը չէ խաղացած եղեր» . . . «Փրանքօ - Հայկական» ընկերութիւնը հիմնուեցաւ կարգ մը նշանաւոր ֆրանսացի հայաստէրներէ (Փրոֆ. Մարիյեէ , պ պ . Ժան Մոնիէ , Փիեր Գիյեար , Սապաթիէ , Ժան Բեվիլլէ , Լավիս , Հ , Շարմալեան , Գոչէն , եւն , ) գործակցութեամբ քանի մը Հայերու (Խաբէնտէր , Ջոււղ ասպետ , եւ ուրիշներ) • այդ ընկերութեան գործօն անդամները Փրանսացիներ էին միայն • Հայերը խորհրդականի եւ աջակցի դեր միայն կը կատար-

րէին . այդ ընկերութիւնը հետեւեալ «ազգա-  
վնաս» գործերը կատարած է . այն օրն ուր Հ.  
Շարմրթանի նախաձեռնութեամբ Մաարլէնի  
եկեղեցւոյն մէջ հայ նահատակներու հոգւոյն  
հանդիսաւոր պատարագ կատարուեցաւ . Ի ներ-  
կայութեան հազարաւոր մրանասցիներու , այդ  
ընկերութիւնն իր անու՝ ով ու իր ծախքովն  
հրատարակեց հայկական խնդիրը յուսաբանող  
Ֆրանսերէն տետրակ մը (այս առգերը ստորա-  
գրողին կողմէ խմբագրուած) , որ եկեղեցւոյն մէջ  
ձրիաբար բաժնուեցաւ . ներկաներուն . այդ ըն-  
կերութիւնը 1898ին Ֆելիքս Պոր նախագահին  
ներկայացուց հայկական խնդրոյն արմատա-  
կան լուծումը պահանջող ուղերձ մը զոր ստո-  
րագրել տուած էր (անադին յոգնութիւն յանձն  
առնելով) շուր հարիւր չափ մեծանուն ֆրան-  
սացի անձնաւորութիւններու : Այդ ընկերու-  
թիւնը կազմակերպեց ի նպատակ հայկական դա-  
տին երեկոյթ մը՝ Փարիզ՝ Արքուրի սրահին  
մէջ , ուր պ Մարիլիէ բանախօսութիւն մ'ար-  
տասանեց : Այդ ընկերութիւնը Լա Հէի Հա-  
մաժողովի միջոցին պ. Լավիսի ձեռքով՝ ներ-  
կայացուց պ. Տելբաւէին կարեւոր յիշատակա-  
գիր մը հայկական խնդրոյն լուծման անհրա-  
ժեշտութեան մասին : Ահա այն յանգանքները  
գոր գործած է այդ ընկերութիւնը . (եւ թերեւս  
զեռ կան ուրիշ յանցանքներ ալ զոր կը մոռ-  
նամ յիշելու) . Ինչպէս կը տեսնէք , ազգին շահը  
ասոնց մէջ ոչ մէկ գեր չէ խալուցած . . . «Մխի-  
թար» ըսուած տիրացուն , վեց տարիէ ի վեր  
որ Եւրոպայի մէջ կը սլքտայ , կատարած ունի՞  
արգեօք մեկ գործ մը որ տարտամօրէն նմանի  
այդ ազնիւ եւ օգտակար ձեռնարկներուն : Դա-  
լով այդ ընկերութեան հայ գործակիցներուն ,  
անոնց յանցանքն ալ եղած է բացարձակ անձ-  
նուիրութեամբ եւ անշահախնդրութեամբ օգ-  
նել բարոյապէս ու նիւթապէս այդ ազնիւ մը-  
րանասցիներուն գործունէութեանը : Պ . Իս-  
քէնտէր գոնէ գուս ընկաւ , հանգանակութիւն  
մ'ըրաւ եւ յանձնեց հազար ֆրանքի մօտ գու-  
մար մը այդ ընկերութեան գանձապահին : Ես  
հաւաքած եմ տեղեկութիւններ , խմբագրած եմ  
տեղեկագրեր , յիշատակագրեր , ըրած եմ գիմում-  
ներ , եւն : Ահա ինչ որ «Մխիթար» մեր երե-  
սին կը նետէ իր շիլ գործ մը , «պատուանդան»  
ուսնեալու համար սարքուած , եւ ուր «ազգին  
շահը գեր չի խաղար եղեր» . . . Դատեցէ՛ք :

«Մխիթէ Սանթրալ» ին մէջ , որ Սուլթանին  
հետ բանակցութիւններ ունեցաւ՝ ֆրանսացի

կարեւոր անձնաւորութեանց խորհրդակցու-  
թեամբ , ես ո եւ է գեր չեմ կատարած (պիտի  
պարծիլ , դարձեալ կ'ըսեմ , եթէ գեր կատարած  
բլլայի) : Այդ բանակցութիւնները ո եւ է զրա-  
կան արգելիքի շամդեցան , ինչպէս եւ նոյն  
միջոցին Արեւմտ . քիւրօին նոյն նպատակով  
ըրած նմանօրինակ բանակցութիւնները Սուլ-  
թանին հետ . բայց «Մխիթէ Սանթրալ» ին  
բանակցութեանց ծրարը այնքան չահեկան ու  
կարեւոր նկատուեցաւ Լավիսի պէս մարդու մը  
կողմէն որ իր «Մեղիւ տը Փարի» ամսագրին  
մէջ հրատարակեց զայն ամբողջապէս , պ . Գիյ-  
եառի մէկ բացատրողական յօդուածովը : Ես  
ուրիշ բան չըրի բայց եթէ «Մեղիւ տը Փարի» ի  
այդ հրատարակութեան մէկ ամփոփումը տպել  
«Անահիտ» ի մէջ , «Եր կեանք» ին յետոյ ուր  
պ. Արփիարեան հրատարակեց՝ յարգանքով ու  
համակրանքով՝ ամբողջական թարգմանութիւ-  
նը . — «Հայկական Միութիւն»ը հիմնուած էր  
գլխաւորապէս Պոլսոյ մէջ գտնուող խումբ մը  
անձերէ . այդ ընկերութեան առաջին գործը ե-  
ղաւ Պոլսոյ բանտերուն մէջ անոք ու անօգ-  
նական ձգուած յեղափոխական բանտարկեալ-  
ներու ի նպատակ հանգանակութիւն մը բա-  
նալ : այդ ընկերութիւնը Պոլսէն ինծի ալ գի-  
մած էր որպէսզի հանգանակութիւն բանամ  
«Ճեանիտ» ին մէջ . ո՞՞նոյն ատեն իր Փարիզի  
աջակիցներէն Վիճյն — «Վահէ» ի — եւ Գիյ-  
եառի միջոցով դիմած էր պ . Իսքէնտէրին որ-  
պէսզի այդ հանգանակութեան գանձապահն  
ըլլայ . ինչ որ պ . Իսքէնտէր ազնւօրէն ընդու-  
նեցաւ . ինչպէս կրնայի այդքան սրտի զըպ-  
չող , կարեւոր , ամէն կերպով գովելի ձեռնար-  
կի մը չաջակցիլ . հրատարակեցի կոչը եւ հը-  
րաւիթեցի «Անահիտ» ին ընթերցողները մաս-  
նակցիլ այդ հանգանակութեան , որ կատարու-  
եցաւ ամենէն պայծառ ու կանոնաւոր պայ-  
մաններուն մէջ : Բոլոր նուիրատուներուն  
անունն ու ընծայուած գումարները հրատա-  
րակուեցան «Անահիտ» ին մէջ . հանգանակու-  
թեանէն գոյացած դրամը հաւաքուեցաւ պ . Իս-  
քէնտէրի մօտ , որ , պ . Գիյեառի միջոցով զայն  
հաղորդեց հանրածանօթ «Աիկ տէ տրուա տը  
լ'օմ» ին , որ ուղղակի զայն զրկեց Պոլսոյ պատ-  
րիարքին՝ բանտարկեալներուն բաժնուելու հա-  
մար , — եւ «Օրօրն» ալ հրատարակեց այդ գու-  
մարին զրկուելու : Ինչո՞վ , կը հարցնեմ , ինչո՞վ  
այս գործը վնասակար եղած է ազգին : «Հայ-  
կական Միութիւն»ը հիմնողներուն նպատակն

էր. (որքան որ ինծի տրուած բացատրութիւններէն ըմբռնած էի) . կազմել մարմին մը, անկախ՝ երկու գոյութիւն ունեցող մարմիններէն, հետեւաբար եւ անոնց միջեւ տեսող կըռուներէն ազատ, որ կարենար իրեն միացնել ազգին չէզոք անդամները սրտնք երկու մարմիններուն քստմնելի պատակտումէն զգուած՝ չէին ուզեր անոնց գործակցիլ . այդ երկրորդ մարմինը չէր ձգտեր միւս մարմինները կործանել . իր նպատակն էր՝ անգամ մը որ ամբարշտը զարձակուէր ու հեղինակութիւն ստանար՝ կոչոււմ ընել երկու մարմիններուն որ վերջացնեն իրենց վէճերը եւ միանան իրեն հետ, որպէսզի կազմուի միակ յեղափոխական հզօր զանգուածը զոր ազգը կը ցանկայ կազմուած տեսնել . Եւ սուտ է թէ այդ մարմինն հիմնադիրներէն ոմանք, հնչակեան ըլլալով հանդերձ, հնչակեան կեդրոնէն գաղտնի՝ այդպիսի նոր խմբակ մը կը կազմէին հնչակեան կեդրոնը դիտէր ամէն բան, Արփիարեան ինծի յայտնած է, ուրիշ անձերու ներկայութեան, թէ իր գիտակցութեամբն ու իր հաւանութեամբն է որ «Հայկական Միութեան» նոյն իսկ կնիքը շինուած է . Այդ «Միութիւն»ը հակահնչակեան չէր արգէն, ան նախ պիտի ըլլար, նոր ու թարմ տարրեր իր մէջ առնելով, նեցուկ մը ու «վերանորոգիչ» մը հնչակեանութեան, — որ այդ միջոցին յոգնած, տկարացած էր :

Այս բոլորը բացարձակապէս յստակ, ազնիւ բաներ են : Ինչ որ ասոնցմէ աւելի յստակ է, այն է թէ նոյն իսկ եթէ «Հայկական Միութիւն»ը ամբարնար ու ընդարձակուէր, ես որոշած էի այդ ընկերութեան մէջ ո եւ է պաշտօն չընդունիլ, եւ ասիկա բացէ ի բաց յայտնած էի թէ այդ ընկերութեան անդամներուն, եւ թէ պ. «Միութեան»ին որ շատ լաւ գիտէ այս բանը : Այդ վաղամետիկ ընկերութենէն, ամէն պարագայի մէջ, կը մնայ միակ գործ մը, — քանի մը հարիւր Ֆրանք բանաւարկեալներուն զրկուած : Վիթիարի բան մը չէ ասի անշուշտ, բայց վերջապէս օգտակար գործ մըն է, շատ աւելի օգտակար քան «Միութեան» ըմբռնող գոյութիւնը վեց տարիէ ի վեր :

Պէտք չունիմ այլևս դիտել տալու թէ «բանտարկեալներու համար ընկերութիւն»ը զոր կը յիշէ պ. «Միութեան», գոյութիւն երբեք չէ ունեցած . «Հայկական Միութեան» մէկ ձեռնարկն

է այդ, եւ ոչ թէ զատ ընկերութիւն մը . բայց պ. «Միութեան»ի համար սովորական բան մըն է իր չգիտցած, չուսումնասիրած, չըմբռնած բաներուն վրայ վճիռ արձակել, հնարելով, խեղաթիւրելով, ստելով : Պիտի գիտել տամ միայն որ «Միութեան», այս խնդրոյն վրայ խօսելով, համարձակած է մինչեւ իսկ կասկածի ստուեր մը երկնցնել Քիչեարի պէս բոլոր Հայերու երախտագիտութեան ու յարգանքին արժանի եզոց ստանչելի գործիչի մը եւ Իսքէնտէրի պէս միշտ իր ազգին օգտակար ըլլալ ջանացած Հայու մը վրայ : Իրաւ է որ «Միութեան» վայրագ չէ անոնց համար . այդ ահարկու «կործանիչը» գթութեան բարութեան պզտիկ տծու մը ունի իր սրտին սպառնազին ապառաժներուն մէկ անկիւնը . եւ ահա ինչու կը հաճի «մեզմացնել» այդ երկու անձերուն յանցանքը . («Իսքէնտէր» խաղալիք մը եղած է, կը գրէ ինչպէս Քիչեար, հասարակ խորամանկներու ձեռքը, եւ ուրիշ տեղ մը . «պէտք է միւսներուն, մանաւանդ Քիչեարին համար, սա մեղանցողից պարսպան յիշեմ . «Վահէ»ն յաջողած էր ամենքն ալ խարել» : «Մեզմացուցիչ պարագայ» բացատրութիւնը կը գործածուի յանցաւորներու համար որոնք յանցանք գործած են, բայց ունին պարագաներ որ կը թեթեւցնեն իրենց յանցանքը . հրէշային բան մըն է որ Հայ մը կըրցած ըլլայ ստորագրել այսպիսի բրգային ապերախտութեան տող մը անձերու նկատմամբ որոնց անունը օրհնութեան բառերով միայն պարտաւոյ է արտասանուել ո եւ է Հայ :

Իսկ իմ մասիս, ահա ինչպէս կը թւերեղացնէ «Միութեան» իր դատումը . «Այսօր ինծի համար ապացուցուած բան մըն է թէ «Անահիտ» զոռանք կը յայտնէր թէ՛ վեր. հնչակեաններուն թէ՛ Չ. Յ. Դաշնակցութեան դէմ միմիայն մէկ նպատակով, մարդ խլել անոնցմէ իր նոր մարմին համար, թքնել պնակին վրայ որ միւսները կտքաչուին եւ իրեն մնայ պնակը . . . . 1901-2ի ընթացքին մէջ ալ (Միութեան) անյաջողութեան պատասխանատուներն են «Վահէ» . Փափազեան եւ Զօպանեան, այս վերջինը անոր համար որ հակառակ իր ամենէն մտերիմ բարեկամներուն, ինչպէս պարզ ծանօթներուն կողմէ տրուած խրատներուն, կը տքնի . կը յամառի դիփոմաթի գեր մը կատարելու համար Փարիզ, ամենէն մասնական վլաննիցով, աս ու ան հրմշակելով շինել իրեն պատուանդան մը :

Գրականութիւնը . բռնեք անցողաբար, միակ գործն է որուն մէջ պէտք էր վաղուց ամփոփուելու եւ հոն մնալ . աշխատելով խորունկութիւն ստանալ :

Այս տողերը վերջնապէս գիտ կը համոզեն թէ «Մխիթար» «գիտակից» ստախոս մըն է . որովհետեւ անհնար է որ երկվայրկեան մը հաւատամ թէ իմ մտքին այս կարծիքն այսքան պաշարունակութեամբ այտնած ատեն անկեղծ ըլլայ : Ո եւ է թորոս մը կամ կիրակոս մը եթէ գիտ ըլլային ասիկա . պիտի կարենային մտածել պահ մը որ գիտ մտէն չճանչնալով . սխալ տեղեկութիւններէ կամ արտաքին պատրուական երեւոյթներէ խաբուած է . իսկ «Մխիթար»ը որ տասերկու տարիէ ի վեր գիտ կը ճանչայ . եւ որ օր առ օր առիթ ունեցած է իմ նկարագիրս ուսումնասիրելու . եւ որ հազար անգամ բերանացի ու գրաւորապէս յայտնած է ինձի այս կարծիքին ճիշդ հակառակը . անկարելի է որ համոզմամբ գրած ըլլայ այս տողերը . Իայց խեղճը չէ խորհեր թէ սրովհետեւ ինքը գիտակցաբար ուզեր է չեղեալ համարել իրողութեանց ամբողջ շարք մը . ատով իրողութիւնները չեն դադրիր իրողութիւն մնալէ : Այդ իրողութիւնները մատնանի : ընելու աւելորդ յոգնութիւնը յանձն պիտի չտանն : Արժիարեանի մասին 1902ի փետրուարի «Անահիտ»ին մէջ հրատարակած յօդուածովս անոնցմէ բաւական թուած եմ ու ոչ ոք չհերքեց զանոնք : Մէկ մանրամասնութիւն մը միայն պիտի յիշեմ : 1900ին՝ երեք ամիս անընդհատ ետեւէս ինկաւ «Մխիթար» գիտ համոզելու համար որ Դրօշակեան գործիչ զանամ . հաւաստելով թէ ատի ամէն տեսակէտով ինձի օգտակար պիտի ըլլար : «Մխիթար» գիտէ թէ ինչ եղաւ իմ ընթացքս այդպարագային մէջ . եւ սակայն չէ երբեք եղած պարագայ մը ուր մարդու մը շահախնդիր ըլլալը կամ չըլլալը այնքան յստակօրէն որոշուէր «Մխիթար» պիտէ թէ ինչպէս չօգտուեցայ «գիրքի մը տէր» ըլլալու այդ առիթէն որովհետեւ ամէն բանէ նախամեծար համարեցայ խղճիս ձայնին հնազանդիլը . եւ ատի՛ այնպիսի օրերու մէջ ուր նիւթական կացութիւնս շատ հեռու էր փայլուն ըլլալէ . ու «Մխիթար» գիտէ որ Արժիարեանի գա՛ձերը չէ որ ինձի այդպէս վարուել կուտային . — խեղճը իր «ձոր կեանք»ը հրատարակելու միջոցները հազիւ հալ կը ճալէր այդ միջոցին . ոչ ալ «Հայ աւան Միութեան» պնակին (!) յոյսը

— «Հայկական Միութիւն»ը արդէն արդարոց քունը կը քնանար — ոչ ա «Վահէի»ն ամբարած հարստութիւնը — «Վահէ»ն այդ միջոցին Պոլսոյ բանտին մէջ թնդուած էր ելքը չափազանց դժուար թուելով : Այս բուրբ գիտէ «Մխիթար» : Ինչպէ՞ս ուրեմն չ'ամչնար ինձի վերագրելու զգացումներ որոնց իմ մէջս անգոյութիւնը աշխարհիս վրայ իրմէ աւելի գիտցող չկայ Ո՞վ կը կարծէ որ հրմշտկել ուզած եմ . եւ ինչ «պատուանդան» չիներու համար : Զի՞նքը հրմշտկած եմ արդեօք : Խենթեցած ըլլալու է այդպէս մտածելու համար : Պոլսոյ մամուլին մէջ իր ատենով կատարած դերը նշանակալից էր անշուշտ . եւ զայն դնահատած եմ՝ բուն արժէքէն չափազած աւելի մեծ ցոյց տալով զայն՝ վեհանձնութեամբ մը . ուր երբեմնի միամտութենէս շատ բան կը մտնէր . բայց ի՞նչպէս կարելի է որ երեւակայէ թէ պատուանդան մը չիներու համար հրմշտկելու պէտք զգամ զինքը՝ այստեղ Եւրոպայի մէջ . ուր ոչինչ մըն է . ես որ երբեք մտքէս չեմ անցուցած զինքը հրմշտկել նոյն իսկ Պոլսոյ մէջ ուր բան մըն էր (կամ գոնէ կը կարծէի թէ բան մըն էր) : Եւ ի՞նչ ըսել է «պատուանդան» . ի՞նչ պէտք ունէի «պատուանդանի» . իմ աշխատութիւններս . որոնք Անաթոլի Ֆրանսիերուն . Մալարմէներուն . Քեմի տը կուրմոսներուն եւ Բոլ Ատաններուն գնահատումն ու նեցան . չէի՞ն կազմեր ինձի համար լաւագոյն պատուանդանը . որմէ իջնելու եւ «Մխիթար»ը իր պատուանդան բնորելու համար խելքս կորսնցուցած ըլլալու էի : Արդեօք «Մխիթար» կ'երեւակայէ թէ իր «չեկոք-միջնորդ»ի զաւելտական փա՞ռքը ձեռքէն կապտել կ'ուզէի : անհնարին է հաւատայ այսպիսի ցնորական ենթադրութեան մը : Շատ տարբեր «Մխիթար»էն որ . մութի մէջ . մանուածապատ միջոցներով . հակասական արարքներով կը կատարէր իր ազետաւոր միջնորդի դերը . Միութեան ի նպատակով դերս ես արձակ լոյսին կատարեցի միշտ . «Անահիտ»ի մէջ յօդուածներովս բացայայտօրէն ցոյց տուի մտածելու եղանակս որ էր երկու կուսակցութիւնները հրաւիրելու ռզղակի բանակցելու . եւ եթէ երկու կուսակցութիւնները սկսէին ռզղակի բանակցիլ . ես որոշապէս յայտնած էի հնչակեան բարեկամներուս որ լիազօրի պաշտօն չպիտի ընդունէի (ինչպէս որ անոնց յայտնեցի նաեւ որ երբեք չմտածեն ինձի իրենց կեդրոնին մէջ կամ շուրջը ո՞ր է պաշ-

տօն տալ, ինքզինքս անկարող զբալով յեղա-  
 փոխական վարիչի գերին որուն համար անհր-  
 րաժեշտ կը նկատեմ երկիրը մանրամասնօրէն  
 ճանչնալ 1)։ Ի՞նչ «պատուանդան» է որ կրնամ  
 փնտոած ըլլալ, ինչպէս անուանուած անոնց  
 ազգիւր մը, Բայց ինչպէս «Մխիթար» չի յի-  
 շեր որ այդ ապուշ ամբաստանութիւնը ար-  
 զէն ինծի զէմ ուղղուեցաւ փարիզեան կարգ  
 մը ողորմելիներու կողմէ, որոնք սահայն  
 պատուոյ ատեանին մէջ, ուր սքանչելի առիթ  
 մ'ունէին այդ ամբաստանութիւնը ապացու-  
 ցանելու, ուրիշ բան չկրցան ապացուցանել  
 բայց եթէ իրենց անօրինակ ապուշութիւնն ու  
 անխղճամտութիւնը։ Ու «Մխիթար» գրեթէ թէ  
 երբ Ֆրանսական դատարանի դիմեցի Անաթոլ  
 Պարանոբ, Բիւյեարի եւ Պերարի պէս անձնաւո-  
 րութիւններ, որ Փարիզի մէջ վեց տարիէ ի  
 վեր կեանքս ու գործունէութիւնս շատ մօտէն  
 ճանչցած են, իրենց պարտք համարեցան յար-  
 գանք յայտնել ոչ միայն կատարած գործիս  
 օգտակարութեան այլ նաեւ ու մանաւանդ «ան-  
 շահախնդրութեան» մասին։ «Կ'իմանամ, կը  
 դէր վիքթոր Պերար պ. Ալպէր Քլեմանտյի,ն,  
 եթէ պ. Զօպանեանի պաշտպանութիւնն ստանձ-  
 ներ էք։ Հայ ժողովրդին բոլոր բարեկամնե-  
 րը ձեզի երախտապարտ պիտի ըլլան ատոր  
 համար։ Ոչ ոք Զօպանեանէն լաւագոյն կեր-  
 պով չէ ծառայած ազգային դատին։ Իր կեանքը  
 հինգ տարիէ ի վեր, երկայն զոհաբերութիւն  
 մը եղած է այդ դատին։ Պիտի ըսէք թէ իր  
 տաղանդին համար ի՞նչ հիացում եւ իր բա-  
 ցարձակ անշահախնդրութեանը համար ի՞նչ  
 յարգանք կը տածեն ամէն անոնք որ զինքը  
 ճանչցած են. անոնք որ, ինծի պէս, իր բոլոր  
 ջանքերուն մօտէն հետեւած են, ձեզ առաջուց  
 շնորհակալութիւն կը յայտնեն։»

Ասոնցմէ յետոյ, ի՞նչ «պատուանդան» կ'ու-  
 գէ «Մխիթար» որ բազմայի ունենալ։ Ծիծա-  
 ղելիին զգացումը կորանցուցած է բոլորովին։

1) Միայն Ազատական Ծամանցիներու Հա-  
 մաժողովին մէջ Հնչակեան պատգամաւորնե-  
 րուն միանալու համար ինծի եղած հրաւերին է  
 որ չմերժեցի, եւ այդ ժամանակաւ որ զերն ալ  
 ընդունեցայ գլխաւորապէս որովհետեւ ատոր  
 մէջ կը անսնէի Հնչակեան եւ Իրօշակեան կու-  
 սակալութեանց ներկայացուցիչներու քով քովի  
 դործունէութեան առիթ մը եւ կը փախաբէի  
 այդ առիթին օգտուելու ուղղովի բանակցու-  
 թեանց թէկիւն յաջողութիւն եւ ատով Միու-  
 թեան իրականացման փութացումին նպաստել։

Ու ինչպիսի անգիտակցութեան հասած ըլլա-  
 լու է, հրաւիրելու համար զիս որ «գրակա-  
 նութեան մէջ սահմանափակուած մնամ, եւ  
 խորունկութիւն ջանամ ստանալ (!)» մոռցի՞ր է  
 որ 1897ին Անաթոլ Պարանոբ նախագահու-  
 թեամբ արսասանած բանախօսութեանս  
 առթիւ, ինծի՞ որ այնքան յիշ «խորունկ» եմ  
 եւ այնքան «մանկական տիփլումաթ» մը, ինչը  
 խորախորհուրդ զի անագէտ ու գրական խո-  
 ըութեան հոր մը անյատակ սապէս կը գրէր  
 14 ապրիլ, 1898 թուակիր նամակի մը մէջ։

«Եթէ կան որոնք կ'ողբան յեզափոխու-  
 թիւնը, եւ կան ալ որ կը ջատագովեն զայն,  
 ինձ այնպէս կ'երեւայ որ երկու կողմն ալ հա-  
 լասարապէս քեզ պուշտելու է։ Դո՛ւ ես, Ար-  
 շակ, առանց շողքօրթութեան, Կու ես միակ  
 մարդը որ կրցաւ չբերել ազգին ոչ մէկ վնաս  
 եւ միանգամայն ընել անոր ամենամեծ ծառա-  
 յութիւնը։ Երբ մութին մէջ աս ու ան պատ-  
 րաստութիւններ կը տեսնէին յեզափոխական  
 նպատակով մը, դու ատոնց մասնակից չէիր եւ  
 չեղար, ու երբ ազգը ցիրուցան եղաւ, յեզա-  
 փոխական գործիչներէն ոչ մին կրցաւ ազգին  
 անցեալին եւ ներկային վրայ սեւեւել եւրո-  
 պական աշխարհին զարգացած դատուն համա-  
 կիր ուշադրութիւնը։ Եւ դուն ըրիր այս ա-  
 հագին գօրծը, մինակդ Ահա ինչու ըսի որ ազ-  
 գին երկու բաժանումն ալ այսօր հաւասար  
 յարգանքով մը, սիրով մը անուեղ միշտ ող-  
 ջունելու է։ Հնչակեաններու, Իրօշակեաննե-  
 րու թշնամիները չեն կրնար, առանց անար-  
 դարութեան, չճանչնալ թէ ազգին օգտակար  
 բան մ'ըրիր, զանի բարձրացնելով այնքան  
 մեծ Եւրոպացիներու մաքին ու սրտին մէջ։  
 Բոլոր արիւնկզակ յեզափոխականները ամօ-  
 թապարտ մնալու են որ իրենց կարգէն չելաւ  
 մէկը որ խօսէր այնպէս ինչպէս գու խօսեցար  
 այն փոքրիկ տետրակովդ։»

Ու վերջապէս, կը հարցնեմ իրեն, «Դուք,  
 ո՞վ «Մխիթար», որ զիւրանագիտութեան բոլոր  
 գազանիքները կ'ըլեր էք, վեց տարիէ ի վեր  
 որ Եւրոպայի մէջ կը զեզերէք ի՞նչ ըրէք ձեր  
 ազգին համար, ինչո՞ւ ձեր վիթխարի կարո-  
 ղութիւնը ի սպաս չդրիք մեր ազգային դա-  
 տին, որ այնքան պէտք ունի գործիչներու։  
 Բայ ի սա «գօտով միջնորդի խայտառակ կա-  
 տա երգութեանէն. ի՞նչ ըրիք վեց տարուան  
 մէջ»։ Հնչակեանները ձեզ մարդ կարծեցին ու  
 իրենց վարիչ ընտրեցին, պատասխան անգամ

չտուրիք ի, ենց : Արտասահմանի հայ մամուլին մէջ հարիւրաւոր խնդիրներ կ'արծարծուէին . ժողովուրդը, մութի մէջ ինկած, լոյս կը սպասէր բոլոր հորիզոններէն . դուք , զոր ազնիւ միամտութեան վայրկեաններու մէջ մեծ հրապարակագիր մը կարծեցինք, ինչո՞ւ եւ ոչ իսկ անգամ մը ձայն չբարձրացուցիք, կարծիք մը չյայտնեցիք, ճամբայ մը չցուցուցիք : Եւրոպական հասարակութեանց առջեւ անհրաժեշտ պէտք կար մեր ազգին դատը պաշտպանելու , եւ այդ գործը կատարողները ա' յնքան քիչ էին . ինչո՞ւ եւ ոչ իսկ փորձ մը չըրիք այդ ճամբուն մէջ գործ մը տեսնելու : Ապիկարութեան ու անտարբերութեան այդ երկարատեւ ապացուցումովը փայլելէ յետոյ, դուք ի՞նչ պէս հիմա կը համարձակիք այդպիսի Արամազդեան պատգամներ արձակել անձի մը որ իր բոլոր վայրկեանները ազգին նուիրած է վեց տարիէ ի վեր եւ կատարած է գործ մը զոր դուք իսկ հինգ տարի առաջ «ահագին» կ'անուանէիք :

Բայց Վոսմեանի յօդուածը յաջողած է — հրաջքով մը — աւելի զգուելի ըլլալ քան նոյն իսկ «Մխիթար»ինը . Վոսմեան կը հրատարակէ բաց-նամակ մը զոր Արփիարեան վեներտիկէն զրկեր է նզրկատոս բնակող իր մէկ բարեկամին եւ զոր այդ բարեկամը զրկեր է «Հայրենիք»ին : Այդ բարեկամը՝ անտարակուսելի կերպով՝ «Մխիթար»ն է , կամ աւելի ճիշտ «Հաճի Մխիթար»ը, ինչպէս ատենով ինքզինքը կ'անուանէր, որովհետեւ այդ ողորմելին աւելի «հաճի» կոչուելու արժանի է քան «Մխիթար» : Այդ բաց-նամակին մէջ, Արփիարեան կ'ըսէ թէ վերջերս իրեն գէժ կատարուած սպանութեան փորձը «Վահէ»ին գործն է, որովհետեւ «Վահէ»ն կը վախճայ եղեր Արփիարեանի ընելիք յայտնութիւններէն :

Այդ նամակին առթիւ Վոսմեանի արտայայտած գաղափարներուն խաղճութիւնը երեւան հանելէ առաջ , պէտք է ըսեմ որ Արփիարեանի դէմ սպանութեան փորձը ինձի թուեցաւ, այն վայրկեանէն իսկ երբ «Մաթէն»էն զայն իմացայ, իրրեւ պնդմաստ արարք մը : Չեմ գիտեր թէ որո՞նց կողմէ եւ ի՞նչ նպատակով այդ գործը կատարուած է , բայց ով ալ ըլլայ զայն կատարողը , սխալ մըն էր այդ արարքը, այն ամենապարզ պատճառով որ Ար-

փիարեան արդէն սա՛ն ինչ բրած էր ինքզինքը բարոյապէս սպաննելու համար, հանրային գործին շատ վնաս հասցնելէ յետոյ՝ այլեւս դադարած էր գոնէ ըստ իս . վնասակար ըլլալէ՝ քանի որ յեղափոխական գործունէութենէ վերջնապէս վտարուած էր . պէտք էր զինքը ձգել որ իր անկիւնին մէջ մըթմըթար իր պատուի սուտերը, որոնց ո եւ է լուրջ Հայ այլեւս ականջ չէր կախեր — Ասկից զատ , այդ արարքը անախորժ ազդեցութիւն ըրաւ վրաս որովհետեւ ինչ յանցանքներ ալ գործած ըլլայ վերջերս՝ Արփիարեան . ատենով մատուցած է ծառայութիւններ մեր գրականութեան իր հրապարակագիր եւ իրր երգիծաբան , եւ ատի պէտք էր որ նկատողութեան ատնուէր : Բայց լսեցէք Վոսմեանը : Այդ պարոնը նախ իր անհերքելի ճշմարտութիւն մը կ'ընդունի եւ կը ներկայացնէ իր ընթերցողներուն թէ Արփիարի գէժ սպանութեան փորձ կատարողը «Վահէ»ն է անձնապէս(!) . ի՞նչ փաստի վրայ հիմնուելով . — Արփիարեանի մէկ երկտողին վրայ միայն : Ուրեմն Արփիարեանի ո եւ է ըսածը անվիճելի ճշմարտութիւն է հիմա Վոսմեանի համար : Բայց չէ՞ մի որ այդ նոյն Արփիարեանը տարիներով կրկնեց իր թերթերուն մէջ թէ նոյն այդ Վոսմեանը հարցաքննութեան կեղծ թուղթեր դարձնած եւ ատոնց վրայ հիմնուելով իրեն դէմ Պոլիս կատարուած սպանութեան առաջին փորձին զըրզիչն եղած էր . ուրեմն պէտք է ընդունի հիմա թէ Արփիարեանի իրեն գէժ ուղղած ամբաստանութիւններն ալ ճիշտ էին . այս երկսայրաքանութենէն զուրս չի կրնար փախչիլ :

«Արփիար , կը շարունակէ պ. Վոսմեան, կամովին չհետացաւ , այլ խաբէութեամբ մը անոր առջին տակ սպանն դրին կարգ մը մարդիկ «Վահէ», Փափագեան եւ ուրիշներ) կուսակցութեան ղեկը իրենց ձեռքը առնելու համար : Արփիար քաջուեցաւ Վենետիկ եւ 1902ի օգոստոսին «Հայ Հանդէս» անուն կիսամսեակ մը սկսաւ հրատարակել . այդ հանդէսը իր երրորդ թիւէն արդէն կը սկսէր իր ոմբակոծումը նոր հնչակեան կեդրոնին դէմ . . . Եստ չանցաւ՝ Արփիար «տուլանտըրճի խմբակ» անուանեց նոր հնչակեան կեդրոնը . . . Կատարուած էին ուրեմն ահաւոր զեղծումներ , որը Արփիար կը սպառնար հրապարակել : Արփիարի սպանութեան փորձը կը կատարուի ուրեմն, ինչպէս ինքը կ'ըսէ , այդ յայտնութիւններու առջեւն ատնելու համար, եւն ո»

Պ. Վառման եւ իր ընկերները տարիներէ ի վեր կ'ազաղակեն թէ Արփիարեանը պէտք է հեռանայ Հնչակեան կուսակցութենէն . թէ նոյն իսկ Միութեան միակ արգելքը պնդող Հնչակեան կեդրոնին գլուխը մնալն է : Հիմա պ. Վառման կը դաւապարտէ Հնչակեանները՝ որովհետեւ արտաքսեցին Արփիարեանը : Ի՞նչ կ'ըսէք այս ձեռեւողականութեան» (Իրօջակեաններուն սիրելի այս բառը զործածելով) :

Պ. Վառման իբր անվիճելի ճշմարտութիւն կ'ընդունի Արփիարեանի ամբաստանութիւնները Վեջ. Հնչակեանց նոր կեդրոնին զէջ առանց նկատելու թէ այդ ամբաստանութիւնները ոչ մէկ փաստի վրայ հիմնուած չեն, այլ պարզ հաստատումներ (affirmation) են : Արդ, եթէ Արփիարեանի հաստատումները անվիճելի ճշմարտութիւններ են, պ. Վառման պէտք չէ մոռնայ որ Արփիարեան տարիներով յայտարարեց «Նոր կեանք»ին ոչ «Մարտ»ին մէջ թէ Իրօջակեան վարիչները «Ռուսիայէն վարձուած դաւաճաններ են» . պ. Վառման պէտք է ընդունի թէ Իրօջակեան վարիչները իբօք դաւաճաններ են՝ քանի որ ճշմարտութեան առջեւ Արփիարեանը այդպէս ըսաւ : Կարելի չէ վերջապէս ընդունիլ որ Արփիարեանը անաւոր ստախոտ մըն է երբ Իրօջակեանները կ'ամբաստանէ, եւ յանկարծ ճշմարտասու հրեշտակի մը կը փոխուի երբ Հնչակեաններու դէմ շրջուի թափէ :

Պ. Վառման «Հայ Հանդէս»ին յօդուածներուն կուսայ այն կարեւորութիւնը զոր հաւատացեալ մը կ'ընծայէ Ս. Իրքին ո եւ է համարին . ու որովհետեւ Արփիարեան ծանուցեք է իր «Հանդէս»ին մէջ թէ «յայտնութիւններ» պիտի ընէ . պ. Վառման՝ զեռ յայտնութիւններուն ինչ ըլլալը չիմացած, անոնց ինչ փաստներու վրայ հիմնուած ըլլալը չգիտցած, առաջուց կը փութայ այդ «յայտնութեանց» լըրջութեանն ու ճշգրտութեանը հուտալ . . . Չմայլելի չէ՞ ասիկա : Պ. Վառման ինչո՞ւ մոռնալ կը ձեւացնէ թէ միեւնոյն Արփիարեանը իր միեւնոյն թերթին մէջ սպասնացած էր «յայտնութիւններ» ընել ոչ միայն նոր Հնչակեանց պէս, այլ նաեւ, եւ մանաւանդ, կարգ մը Իրօջակեան գործիչներու դէմ : Ահա ինչ որ կը գրէր Արփիարեան «Հայ Հանդէս»ի Բ թիւին մէջ . «Ոչ ես կը փափաքեմ, ոչ Հնչակեան կուսակցութիւնը տրամադիր է Կ ոչ ալ հայ ազգը կ'ուզէ այդ ոճրին պատասխանադատու-

թիւնը ամբողջ Դաշնակցական կուսակցութեան վրայ ծանրացնել : Այդ գիտումով էր որ բուն իսկ չարագործները մասնաճիւղ ըրի «Մարտ»ի մէջ . ասորք են Մկրտչոն կիւրճեան (այժմ Յամանեան բեթիին պաշտօնեայ) . Ի. թիւեան անուն կեղծ կողկասցի մը, եւ Օննիկ Դերձակեան մը (Ամերիկայի մէջ Դաշնակցութեան ներկայացուցիչ Վառման կեղծ անունով) : Այս երեքն էին Կ. Պոլսոյ մէջ կեղծ թուղթը չբջարեութեան զնոդները : Իսկ «Իրօջակ»ի խմբագրին պատասխանատու թեան որքանութիւնը նկատողութեան ասնելու ատենը չէ զեռ : Այսկայն եթէ Դաշնակցական կուսակցութեան բոլոր անդամները ուզեն ինքզինքնին կեղծարարներուն համարաչա նըկատել, ես անզօր եմ զիրենք արգելելու : Այդ պարագային մէջ, ամբողջ կուսակցութիւնը հաւաքաբար, եւ իւրաքանչիւր անդամ անհատաբար ամբաստանեալ կը նկատեմ, եւ ըստ այնմ ալ կը վարուիմ . . . Առայժմ պիտի լռեմ : Մինչեւ 1902 հոկտ. 15 կը սպասեմ Դաշնակցական կուսակցութեան պատասխանին : . . . Եթէ այս ժամանակամիջոցին մէջ իմ եւ ընկերներու կատարեալ գոհացում տան՝ առանց մինչեւ ննդամ ամենաչնչին վերապահումի, այն ատեն խնդիրը փակուած է : Հակառակ պարագային որոշումներս զործարել պիտի սկսիմ : Հետեւանքներուն բոլոր մեղքը թող ծանրանայ Դաշնակցական կուսակցութեան վրին : »

«Հայ Հանդէս»ի Է. թիւին մէջ, Արփիարեան կը գրէր զարձեալ . «Երկու ամսուան պայմանամբ լրացած ըլլալով՝ առանց ո եւ է պատասխանի մը, սկսած եմ իմ ձեռնարկներս ընել : Պիտի գործեմ հանգարտօրէն եւ աստիճանաբար, ամենամանր հետեւանքներուն պատասխանատուութեան մէջ պէտք չէ որ ամենաթեթեւ բաժին մ'ալ ինծի վերագրուի : Դաշնակցական կուսակցութեան պահած խոր լռութիւնը արդէն ինքնին խոստովանութիւն մըն է : Իրենց զրպարտութիւններէն եթէ մէկ հասն իսկ ճշմարիտ եղած ըլլար, պիտի փութային զիմապրաւել : Տարակոյս չունենանք որ «Սեւաբէք»ի հրամանատարները՝ Պոլսու պոս եւ ընկերութիւն (զեռ այսօրուան համար ժածկանուէրով խօսինք) զատապարաւ եւ կուստագութիւնը ակներեւ տեսնելով, ամէն ջանք կ'ընեն որ զորքը լռութեամբ խեղդեն : Զո՞ւր չստի . . . »

Իսկ «Հայ Հանդէս»ի Կ. թիւին մէջ հետեւ-

եայ քրդաւոր փողերով Արփիարեան կը կըրկ-  
նէր իր հին ամբաստանութիւնը Դրօշակեան  
վարիչներուն զէմ որոնք՝ ըստ իրեն՝ Ռոստի-  
այէն վարձուած գործիչներ էին : «Մեզի պիտի  
առարկուի թէ միացման օգուտներուն հետ  
ինչպէ՞ս կրնանք հաշտեցնել «օտար քնդա-  
քականութեան մը շահերուն» ծառայած Իլլա-  
լու կասկածանքը կամ ամբաստանութիւնը . .  
Հայութեան օպպոզիցիոն փճացման — ու այս  
անգամ վճռական ու վերջնական փճացման—  
վտանգը դարանակալ կը սպասէ : Միացման  
լրագործները այդ վտանգին վրայ պիտի խոր-  
հին : Նախ պէտք է ջանալ միամտաբար դէպ ի  
վտանգ չվազել : Յետոյ երբ ազգը ԳԻՏԱԿՑԱ-  
ԲԱՐ դեպ ի վստահը մղուի կան, զանոնք դուրս  
մղել : »

Ինչո՞ւ պ. Վոսմեան «Հայ Հանդէս»ին այս  
տողերն ալ չ'արտատպեր իր թերթին մէջ, եւ  
ինչո՞ւ համար Արփիարեանի յայտնութիւնները  
ջախջախիչ երբ Հնչակեաններու զէմ կ'ուղ-  
ղուին, աննշան կը դառնան երբ Դրօշակեաննե-  
րուն կը սպառնան :

Աւելին կայ . Պ. Վոսմեան «Հայ Հանդէս»ին  
մէկ կտորը կը յիշէ՝ իրրեւ անեզ տոքիւ-  
ման մը «Վահէ»ին զէմ (թէպէտեւ այդ հա-  
տուածին մէջ յիշուած չէ «Վահէ»ին ոչ ալ  
նոր Հնչակեան ո եւ է գործիչի անունը) : Բայց  
պ. Վոսմեան ինչո՞ւ չէ նկատած թէ «Հայ  
Հանդէս»ին մէջ կան ուրիշ հատուածներ ալ,  
ուր նոյն «Վահէ»ին անունը կը յիշուի շատ  
տարբեր ձեւով մը . ու տեսէք ի՞նչ կ'ըսէ այդ  
հատուածներէն մէկուն մէջ ճշմարտախօս Ար-  
փիարեանը . «բոլոր պաշտօնակիցներուս հետ  
համամիտ էինք խոնակուի ընթացքի մը հետե-  
ւելու : Կեդրոնական վարչութեան մէջ պ. Ար-  
զուեան («Վահէ») պարագլուխ պաշտպանն էր  
այդ ֆողափակաւորեան («Հայ Հանդէս», թիւ  
Գ. , էջ 40) : »

Ո՞րն է վերջապէս ճշմարտախօսը այս բոլոր  
Արփիարեաններուն մէջէն . ա՞յն որ Արզուեանը  
«խոհական քաղաքականութեան պարապլուխ  
պաշտպան» կը հռչակէ թէ այն որ «յայտնու-  
թիւններէ վախճող» կը յայտարարէ հիմա զայն,  
կամ թէ ա՞յն որ Վոսմեանը «կեղծարար ու  
մարդասպան» եւ Դրօշակեան կարգ մը վարիչ-  
ներ «օտար քաղաքականութեան մը շահերուն  
ծառայող» կը նկատէ . . . Ահա հարցում մը  
որուն պէտք է պատասխանել :

Պատասխանը շատ դիւրին է այս հարցման :

Երբ մարդ ուզէ կախիլ մը ուղղամտութիւն եւ  
պուտ մը յընտրելու՝ դեռ իր մեյանին մէջ :  
Արփիարեան . երբ արտաքսուելով Հնչակեան  
կուսակցութիւնէն, Վենետիկ քաղաքացաւ ու  
«Հայ Հանդէս»ն սկսաւ հրատարակել, ուզեց  
նախ անուշ վարուիլ Կոնստանդ հետ, որոնց  
մէջ կը կարծէր զեւ բարեկամներ ունենալ,  
ինքզինքը ներկայացուց իրրեւ միտ Հնչակ-  
եան դրօշին հաւատարիմ մնացած գործիչ մը,  
ու գովեստներով ողողեց նոյն իսկ «Վահէ»ն  
(դիտնալով որ անոր զէմ գրելով Հնչակեան  
զանգուածն վերջնապէս իրմէ հեռացուցած  
լար) . կը յուսար որ այդպէսով Հնչակ-  
եանց զթուէթիւնը իր վրայ հրաւիրած պիտի  
ըլլար եւ իր թերթը պիտի կարենար ապրիլ՝  
Հնչակեան բաժանորդներով . այդ միջոցին իր  
բողոր կայքակները ուղղուած էին Դրօշակ-  
եաններուն զէմ . «յայտնութիւնները» զոր կը  
սպառնար՝ «արեւմտեան բիւրօ»ին գլխուն վրայ  
էր որ կը կախուէին . պայմանաժամ իսկ տուաւ  
Խեղճ «բիւրօ»ին որոշ պայմաններով . եթէ  
պայմանները չկատարուէին մինչեւ պայմա-  
նաժամին լրանալը, այնպիսի բաներ երեւան  
պիտի հանէր որ Դրօշակեան կուսակցութիւնը  
հիմնադատակ պիտի ըլլար բոլորապէս . . .  
Հնչակեանները արտաքսուած մարդու մը զէմ  
իրենց ընթացքին մէջ անբրդուելի մնացին :  
Դրօշակեանները պատասխան չտուին այդ  
սպառնալիքներուն, բայց ինչ ինչ թերթերու  
մէջ, որ Դրօշակեան ազդեցութեան ներքեւ են,  
Արփիարեան տեսաւ գորովագին թեւեր որ ի-  
րեն կը բացուէին . . . եւ յանկարծ խաղը  
փոխուեցաւ : Պայմանաժամը (15 հոկտեմբեր  
1902) եկած լրացած ու շատոնց անցած էր . . .  
եւ սակայն Արփիարեան բառ մը չէր ըսեր  
Դրօշակեան վարիչներուն զարհուրելի ոճիւ-  
ններուն վրայ . («Հայ Հանդէս»ին վերջին եր-  
կու երեք թիւերը՝ հոկտեմբեր 15էն յետոյ ե-  
րեւցած՝ բառ մը չեն պարունակեր Դրօշակ-  
եանց զէմ) . ընդհակառակն հիմա նոր եղանակ  
մը կը հնչէր «Հայ Հանդէս»ին մէջ . «խոհա-  
կան քաղաքականութեան պարագլուխ» «Վա-  
հէ»ն հիմա՝ սքսղեալ բացատրութիւններով՝  
ցոյց կը տրուէր իրրեւ առլանտործիներու  
խմբակի» մը պետը :

Ահա թէ ի՞նչ հոգեբանութեան, ի՞նչ տրա-  
մաբանութեան, ի՞նչ բարոյականի վրայ հիմ-  
նուած էր այդ «Հայ Հանդէս»ը, որուն պ.  
Վոսմեան կը կըթնի «Վահէ»ի պէս գործիչ մը  
անուանարկելու համար .

Եւ արգէն ի՞նչ յայտնութիւն կրնայ ընել այդ խեղճ մարդը, բաց ի անգամ մը եւս — եթէ ա՛յլ պէտք կայ — իր հոգիին ու մտքին այժմեան տխուր վիճակը յայտնելէ :

Անոնք որ այս «յայտնութիւն» բառը կը շահագործեն հիմա, մոռցած են թէ Արփիարեան անկումը չըջանին ողբալի Արփիարեանը, այն Արփիարեանը որ արտաքսուեցաւ՝ որովհետեւ այլեւս ապացուցուած էր արտաքսուելու արժանի ըլլալը, իր ամբողջ նկարագիրը վերջնական պայծառութեամբ «յայտնած» էր «Մեզի կը նային» տիտղոսաւած յօդուածին մէջ զոր «Նոր կեանք»-ի 1901ի սեպտեմբեր 15ի թիւով հրատարակեց եւ ուր սա խորհուրդը կուտար ինծի ու քանի մը ուրիշ գործիչներու . «... կարող են վերադառնալ Պոլիս, ուր ոչ ոք գիտեմք պիտի նեղէ... եւ ուր ոչ ոք գիտեմք անպատուաբեր յանձնառութեանց պիտի մղէ (!)» :

Ինծի պէս գործիչ մը Պոլիս դառնալու հրաւիրող եւ այդ դարձը անվտանգ պայմաններով կատարելու կարելիութեան ապահովութիւնը տուող Արփիարեան մը ալ ինչպէ՞ս որ եւ է «յայտնութիւն» կրնայ ընել եւ ինչպէ՞ս իր յայտնութիւններուն կարեւորութիւն տուող մը կրնայ գտնել :

Պ.Վռամեան եւ ոչ իսկ չքմեղանքն ունի յայտարարել կարենալու թէ անոր «յայտնութիւններուն» կարեւորութիւն եթէ կուտայ, Արփիարեանի կողմէ կզամ ըլլալուն համար չէ, այլ որովհետեւ «փաստերով» հաստատուած են այդ յայտնութիւնները : Ոչ մէկ փաստ չկայ մէջտեղը, ոչ մէկ փաստի ստուեր մը : Եւ ինչ որ ահաւոր է պ.Վռամեանին համար, այն է որ եթէ ոչ մէկ փաստ չկայ Արփիարեանի նոր Հնչակեանց դէմ սպառնացած յայտնութիւնները հաստատող, կան սակայն իրողութիւններ որոնք ճշմարտանման կը դարձնեն Արփիարեանի ամբաստանութիւնները պ.Վռամեանին դէմ . աւելի քան հաւանական է որ Արփիարեանի «հարցաքննութեան թուղթը» ծայրէ ծայր շինծու տոքլուման մ'ըլլայ . մինք Արփիարեանին պարզ հաստատումովը չենք շատացած . այդ թուղթին լուրջ քննութիւնը կը բաւէ ցոյց տալու՝ անոնց համար որ ամհակամիտ դատավարութեան պարագաները գիտեն եւ գիտեն նաեւ թէ այդ թուղթը ի՞նչ մարդոց ձեռքով ի՞նչ դէպքերէ յետոյ, ի՞նչ պայմաններու մէջ երեւան ելաւ, թէ այդ ենթա-

դրեալ հարցաքննութիւն թուղթը կեղծ է . եւ եթէ մենք տարիներով պաշտպանեցինք Արփիարեանը մատնուած ան ամբաստանութեան դէմ, այդպէս շարունակեցանք ոչ միայն որովհետեւ վերջապէս կտրոյ մը իրողութիւններով քիտէինք թէ այդ անձը այդ չըջանին հայկական շահերուն նուիրուած էր . թէ ատոր համար վտանգաւոր գործերու մասնակցիլ յանձն առած էր (ինքն է որ Քում Քափուի ցոյցին կազմակերպութեան մասնակցած եւ այդ ցոյցին ընդարձակ նկարագրութեանը իր ձեռքովը դրած եւ «Հնչակ»ին զրկած է), այլ մանաւանդ որովհետեւ իր մատնութիւնը ապացուցանելու համար կայծ թղթի մը դարձնումը հարկաւոր տեսնուած ըլլալը մեզ կը մղէին չհաւատալ ամբաստանութեան մը զոր հաստատելու համար այդպիսի խարդախ միջոցներու կը դիմէին : Ասի այնքան ճիշդ է որ «Մխիթար», Վռամեանին ու իր ջոջերուն հրովանդան կուտքը, այն, նոյն իսկ այդ «Մխիթար» իր «չէզոք միջնորդ» թանակցութեանց առաջին մասին վրայ դրած յօդուածին մէջ (որ հրատարակուեցաւ պ.Վռամեանի «Հայրենիք»ին մէջ) բացէ ի բաց յայտարարած էր թէ Արփիարեանի հարցաքննութեան թուղթը կեղծ է : Արփիարեան իրաւունք ունէր «Հայ Հանդէս»ին Բ. թիւին մէջ զրել թէ՛ «կեղծարարութիւնը ապացուցանելու համար մէկ երկու վայրկեան կը բաւէ» : Իրօք այդ հարցաքննութեան թղթին մէջ այնպիսի ակնյայտի անճշգուծութիւններ կան, այնպիսի նիւթական կսպիտ ռխալներ, որ անոր կեղծութիւնն ապացուցանելը շատ գիւրիւն պիտի ըլլար Արփիարեանի համար (եթէ Արփիարեան այդ ապացուցման սպասողութեամբ լրջօրէն ըրած ըլլար եւ ոչ թէ լզրճուկ շանթածի մը համար : Դիրքը զոր պ.Վռամեան հիմա կը բռնէ Արփիարեանի հանդէպ, ամենէն նողկալին է Եւ ամենէն ապուշն ալ — ուր ուր է հայ հրատարակագիր երբեք իջած ըլլար : Հոս, վատութեան եւ տխմարութեան այդ ստորնագոյն աստիճանին վրայ, չեմ զարմանար քով քովի գտնելով Վռամեանը, Արփիարեանն ու Մխիթարը : Իրենց սեղն են :

Ես ըսի իմ ըսելիքս, կը կարծեմ թէ հակառակ նիւթին անօրինակ զգուշութեանը, պէտք էր որ ասոնք ըսէին : Ու կը կարծեմ նաեւ թէ ամէն լուրջ Հայ պիտի ըմբռնէ որ այլեւ

սչինչ բնիւ պէտք չզգամ այս քանի մը վերջին խօսքերէն յետոյ, ուր բառ եմ ամէն ինչ որ ունիմ բնիւ : Հիմա կը մտնեմ վերստին, վերջնապէս . իմ աշխատանոցս . ուր ինձի կը սպասեն զործեր անհունորէն բեզուն ու սիրուն եւ որոնցմէ աչիւս գատուելի ու մը լուկներու զէմ այդ զարչահետ կսիւին մէջ ասան կորսնցնել ու ձեռքերս ազատելը սքրազործութիւն մը պիտի ըլլար ինքզինքիս զէմ :

Ես պարտքս կատարեցի : Այն ազէտքին հանդէպ որ յարձակեցաւ իմ ազգիս վրայ, հնչեակներ ուրբեղով չէի կրնար շատանալ . որուն գործին, էական գործին ինքզինքս լծեցի կամովին ու բոլոր ուժերս անոր ի սպաս գրի : Ուղեցի որ քաղաքակիրթ աշխարհը ճանչնար ինչ որ մեր ժողովուրդն ունի յարգելի (որովհետեւ անտարակուսելի է որ մեր ժողովուրդը Վառանհանէրէն, Միսթարներէն ու Արփարիաններէն տարբեր բաներ ալ ունի) . ու ատր միշտ պիտի շարունակեմ (անհուն գոհունակութիւնն ունենալով նկատելու որ այժմ այդ գործը կը կատարեն նաեւ, մեծ փայլով ու յաջողութեամբ, ուրիշ հայ գործիչներ կամ մարմիններ, ծր. Կորիս Մելիքոֆ եւ իր ընկերները, Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութիւնը, պ. Բ. Սայաթեանց, եւն) :

Համոզուած ըլլալով որ քառորդ դարէ մը ի վեր Հայոց բունած քաղաքական ուղղութեան եւ յնգափոխական թաքթիքին մէջ, հիմնական ձգտումին ճշգուծիւնն ու զեղեցկութիւնը անվիճելի մնալով, կային սխալ կէտեր, երբեմն նոյն իսկ այդ հիմնական ձգտումին յաջողութեամբ վտանգելու շափ սխալ, անհրաժեշտ համարեցայ մասնանիշ ընել այդ սխալները, երբեք յաւակնութիւնը չունենալով այդ քննադատութիւններս անսխալ նկատելու, ընդհակառակն սխալներս խոստովանելու միշտ յօժար երբ համոզուէի սխալած ըլլալուս : Այնքան ազգասիրական որքան մաւորական գործ մրն էր առի, զոր պիտի կատարեմ դարձեալ, ամէն անգամ որ առիթը ներկայանայ : Մտադիր եմ արդէն քիչ օրէն հրատարակել ամբողջական ուսումնասիրութիւն մը, ուր պիտի ամփոփեմ ու վերջնական պայծառութեամբ լուսաբանեմ այդ նիւթին վրայ ցարդ հատուածաբար յայտնած տեսութիւններս, վանելով անոնցմէ ինչ որ անճիշդ էր, պահելով ու մանրամասնօրէն պատճառարանելով ինչ որ անոնց մէջ կը շարունակեմ ձրչգ համարել :

Նկատեցի նաեւ որ մեր դատին լուծման համար անհրաժեշտ էր մեր գործիչ մարմիններուն միացումը, որպէս զի մեր ազգային գործունէութիւնը այլեւս չջլատուէր ներքին պոպայի կոխներով (որոնք միմիայն վնասակար են, քանի որ տեսական տարբերութիւններու վրայ հիմնուած չեն, այլ կու տակցական, անձնական հարցերու վրայ) : Եւ որպէս զի միացած միակ մարմինը՝ ամբողջ ազգն իր շուրջը բոլորելով՝ կարենար իրագործել բոփրկութեան համար հարկաւոր եղող հսկայ ճիգը, զոր իրարու դէմ մաքառող իրար կուծանել ջանացող հատուածներ անկարող են եւ անկարող պիտի մնան կատարելու : Ու հակառակ բոլոր պատահածներուն, մինչեւ հիմա կը յամառիմ սրաւնց բազմալ որ Միութեան դէմ ելլող ու այս վայրկեանիս յարածուն ընդլայնմամբ մը բազմապատկուող խոչընդոտները փչրուին, եւ այդ գեղեցիկ ծրագիրն իրականանայ : Իրօջակեան ու Հնչակեան վարիչներուն մէջ կան ազնիւ ու լուրջ անձեր . կը բաւէ որ անոնք իրենց միջեւ բարձրացող ու պատուար ձեւացնող պատակոյցները մէկդի հրեն ու գէմ դէմի գան, եւ Միութիւնը կարելի կը դառնայ իսկոյն : Կ'աղաչեմ, անգամ մը եւս, որ ի սէր այս տարօրինապէս զքաղզ ազգին, վարիչները ընեն ինչ որ կրնան որպէս զի արդի ահաւոր եղբայրասպան կոխը զազրի :

Տեսայ վերջապէս, որ մեր հանրային գործիչներուն մէջ՝ անձնուէրներուն, անկեղծներուն, լուրջներուն հետ կային նաեւ միմոսներ, իմաստակներ, քապոթէններ ու սրկաներ ալ . պարտք համարեցայ անոնց դիմակը վար առնել, որովհետեւ ատով ազգիս շահերուն ծառայելու համոզումն ունէի. կը կարծեմ այդ ճամբուն մէջ ալ քիչ շատ օգտակար եղած ըլլալ հանրային ուղին կը կարծեմ մաքրած ըլլալ բաւական բազմաթիւ հոպիտներէ : Բայց հապիտները անթիւ են՝ զքաղզպարար, անհատնում : Ու չեմ կրնար համակերպիլ ուժերս անշարժեցնելու այդ գործին մէջ, որ սգտակար է անշուշտ եւ անհրաժեշտ, բայց իմ խառնուածքիս ամէնէն քիչ յարմարը եւ սրտիս ամենէն քիչ մօտը : «Ես սիրելու համար ծնած եմ եւ ոչ թէ ատելու», կ'ըսէ Սոփոկլի Անտիգոնէն . Անտիգոնէին ընտանիքէն է իմ հոգիս : Ու թէպէտ շատ լաւ կը հասկնամ որ ատելութիւնը սիրոյ անբաժան զուգեակն է եւ թէ ուժեղօրէն սիրել զիրացող մը անկարող է հզօր ատելու :

թիւնները խոստովանելու . կը կարծեմ թէ եւրկուքէն նորէն սերն է գեղեցկագոյնը, եւ հրդորագոյնը . եւ բեղմնաւորագոյնը : Գրագրու մը պարտաւոր է ցոյց տայ ինչ որ կ'առէ . առիտն հրաժեշտ է . բայց մ'անտանց պէտք է որ գլխաւորապէս ցոյց տայ ինչ որ կը սիրէ, եւ իր աւժերուն մեծագոյն մասը նուիրէ իր սիրածն ու բիշններուն սիրել տալու : Սկեպտիկները, յոսեփանները, խորանոցները, ձաղկոզները թանկագին ծառայութիւն մը մատուցած են մարդկութեան . բայց գեղեցկութեան ազբիւրներ բղխեցնողները, հրացուծի պատճառներ ստեղծողները, խանդավառութեան լոյսեր վառողները, ազնուութեան պատկերները զրուագողները, եղբայրութեան ու սիրոյ երգը հնչեցնողները ա՛լ աւելի թանկագին գործ մը կատարած են . եւ ատոնց ճիգը աւելի բեղուն ու արդիւնաւոր է եղած նոյն իսկ մարդկային գծուցիւնները նուազեցնելու անսակէտով քան պարզ ձաղկումը . որովհետեւ գիշերը ջնջելու համար զայն անիծելը, անոր չարութիւնն ու կուրուքութիւնը աղաղակելը չի բաւեր, պէտք է արեւը բարձրացնել որուն մէկ նայուածքը կը բռնէ խաւարը հալեցնելու : «Անահիտ» ի առջին տարուան առաջին թիւին առաջնորդող յօդուածիս մէջ կը գրէի՝ «Անահիտ» ի ծրարիւրը պարզելով .

« Ի՞նչ աղելի եւ աղետաբէր է ունենալ ան-  
 » հիմ թեթեւ լաւատեսութիւն մը, բայց շատ  
 » աւելի վտանգաւոր է ինքզինքը փտանցնել  
 » կանխակալ ու ծայրայեղ յոսեփանութեամբ .  
 » վնասակար է յաւակնոտ երազներով փքա-  
 » նալ, վնասակար է ինքզինքը տեսնել իրա-  
 » կանութիւնէն աւելի մեծ, բայց մահացու է  
 » ինքզինքը աւելի յոսի նկատել յան իրա-  
 » կանը : Մարդ պէտք է իր անձը ճանչնայ  
 » ինչպէս որ է, եւ որքան ալ խոնարհ ըլլայ  
 » զիրքով, պէտք է որ հաւատք ունենայ իր  
 » արժէքին, իր ուժին վրայ, եւ յոյս ու կամք  
 » աւելի առաջ երթալու : Մենք պիտի ուզենք  
 » որ թերութիւնները միշտ ցուցուն մեր  
 » ժողովրդին եւ սխալներն ու ոճիրները չա-  
 » բաշար գատափետուին . բայց պիտի ջանանք  
 » որ, անձնաւորութեանց վրայ գանդաղելու  
 » եւ կուսակցական ճահիճին մէջ լինելու  
 » տեղ, մեր թերութեանց ու սխալներուն աղ-  
 » բիւրները, անոնց արմատական պատճառ-  
 » ները երեւան հանուին անկողմնակալ ող-  
 » ւով, որպէս զի ժողովուրդը, փոխանակ զուր  
 » գրգռու միւրով բղկտուելու, կարենայ յասակ  
 » տեսնել եւ ինքզինքը սրբազրել : Բայց մա-  
 » նաւանց պատճառով ճշտօնը ի վեր հանել, ինչ որ  
 » կայ անողջ ու վեճ մեր ժողովրդին հոգեոյն  
 » մէջ, անցնալէն ու ներկայէն ի լոյս պիտի

» բերենք ապացոյցներն անոր կորովն ու  
 » ազնուութիւնը վկայող . եւ մեր ջանքը պիտի  
 » ըլլայ մարդկային քաղաքակրթութեան ա-  
 » մենէն բարձր գեղեցկութիւնները ծանօթա-  
 » ցընել ու բնականօրէն անոր, որպէս զի ա-  
 »ւելի լոյս աւելի՛ ազնուութիւն, աւելի՛ ա-  
 » թութիւն գայ հայ հոգեոյն մէջ : »

Հակառակ որ մեր ազգին մէջ ի յայտ եկող տաղանդի, ազնուութեան, քաջութեան ու եւէ երեւոյթ մեր հասարակութեան ծանօթացնելը միշտ գլխաւոր գործերէն մին եղաւ «Անահիտ» ին, հակառակ որ մտաւոր վեհագոյն գեղեցկութիւններու լոյսը ուսումնասիրութիւններով, թարգմանութիւններով մեր ժողովրդին մէջ տարածելը այս թերթին նախախրած ջանքերէն մին եղաւ, կը խոստովանիմ որ այդ քանի մը տողերը՝ զոր յիշեցի լիովին չիրագործուեցան . ազնու արարքներու, սեւ հոգիներու տեսարանը զիս չափազանց գրաւեց ու զբաղեցուց . խաւարի էակներուն դէմ պայքարը քիչ ատեն ու քիչ արամաղորութիւն թողուց ինձի արեւին յերթումը երգելու : Ատենը եկած կը համարիմ արեւուն դառնալու, եւ հոն մնալու : Պայքարէն քաջուիլ չեմ նկատեր ասիկա, այլ պայքարը շարունակել «ուրիշ» գէնգերով, լոյսին գէնքերով : Տգեղութեան անհուն ազբիւրին վրայ գեղեցկութիւն հոսեցնել, վատութեան պոթկուտէն յուսահատած մեր ժողովրդին՝ մարդկային վեհութեանց կարիւրութեան ապացոյցները չողացնել, օտար կամ հայ վարպետներու հրաշակերտները ճանչցնելով անոր . — ասի շարունակել է միշտ պայքարը : Ու որքան իմ խոնարհ ուժերս ներկն «այս ձեւով» պայքարը պիտի շարունակեմ մինչեւ վերջին շունչս, անուշաղիբ այլ եւս ճամբուն չուներուն որոնք ազիկաբորէն հաջելու ու բոլոր սլացիկ կանանց ազուր ծառերուն դէմ ողորմելիօրէն միգելու իրենց տխուր ու ճակատագրական պաշտօնը պիտի յամաօին կատարել :

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ

Փարիզ, 14 Ապրիլ, 1903



# ՏՊԱՐԱՆ „ԱՆԱՀԻՏ“

22 RUE CLAUZEL, PARIS

Կը սպաղարուին խնամքով եւ մատչելի գներով, հայերէն ու ֆրանսերէն գրքեր, գրքոյկներ, գեղարուեստական հրատարակութիւններ, յայտարարներ, հրաւիրագրեր, այգաքարեր, ծանուցումներ, եւն, եւն:


«ՏՊԱՐԱՆ Ի ՆԱՀԻՏ» պիտի շարունակէ «Մատենադարան Անահիտ»ի շարքը, պիտի սկսէ «գեղարուեստական հրատարակութեանը» նոր շարք մ եւ պիտի շարունակէ նմանապէս Անահիտի հրատարակութիւնները, որոնց առաջինը «Նահապետ Քուչակի Դիւան»ը մեծ համակրութեամբ բնորոշուեցաւ հայ հասարակութեան:

«Անահիտի հրատարակութեանց ամենէն մտակայ թիւերը պիտի ըլլան»

- 1. ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄԻ ՔՍՌԵԱԿԵՆԵՐԸ, Թարգմանութիւն Գ. ՓԱՌՆԱԿԻ
- 2. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ, ուսումնասիրութիւն ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆԻ
- 3. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ՔԵՐԹՈՒԹՅՆԵՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ, (Բ. սպաղարութիւն):
- 4. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻ ԻՆԵՆԵՐԸ, (Բ. սպաղարութիւն):

Բացուած է բաժանորդագրութիւն Պեշիկթաշլեանի կենսագրութիւնն եւ քերթուածներն ու ճառերը պարունակող երկու հատորներուն համար. երկու հատորը պիտի արժեն բաժանորդ գրուողներուն համար՝ հինգ ֆրանք, իսկ սպաղարութեանն յետոյ՝ վեց ֆրանք: Բաժանորդագրուել ցանկացողներէն կը խնդրենք այժմէն զրկել նշանակուած գումարը (5 ֆրանք), որպէս զի բոլոր այժմ որոշենք սպաղարութեան օրինակներու թիւը:

Կը խնդրուի «Տպարան Անահիտ»ի գործաւնութեանց վերաբերեալ ամէն նամակ զրկել սպարանի հասցէին, իսկ «Անահիտ» ամսաթերթին, «Հրատարակութիւնք Անահիտ»ին եւ եւ «Մատենադարան Անահիտ»ին վերաբերեալ ամէն նամակ զրկել խմբագրութեան մշտական հասցէին:



## ՉԱՅՆ ՀԱՐՆԵԱՑ

## ԶԷԽԹՈՒՆՑԻ

Քիչ ատենէն պիտի հրատարակուի շարքը երկու անգամ, ազգային եւ գրական ճոխ եւ բազմակողմանի պարունակութեամբ:

## ԶԵՏՊՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԵՆ ԵՒ ՆՇՐԿԱԳԵՆ

Տարեկան բաժնեգինն է 10 ֆրանք:

Բ. ՄԱՍ

Հասցէ՝

ՓԱՐԻՉ

ARMENIAN PUBLISHING Co.

1903

1731, P. O. BOX

Գին. 2 ֆր. 50 Եւրոպայի համար, 1 ռուբլի Ռուսաստանի համար, կէս տուար Ամերիկայի համար:

BOSTON, Mass.

U. S. A.

## ՍՄԱՐՏ ԵԱՀԱՁԻՋԵԱՆ

## ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄՔ ԻՄ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ

Հուս գցած աշխատասիրութենով Գէորգայ Ախվերտեան, հրատարակութեամբ օրիորդ Մանէ Ախվերտեանի, խմբագրութեամբ «Ազգագրական հանդէս»ի Թիֆլիս, 1903:

ՄՈՍԿՎԱ

1903

Գին 60 կոպեկ

ԱՆՍՏԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԿԻՐ

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը :  
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկրներ) ,  
 2 տարար (Ամերիկա) , 5 բուլյի (Ռուսիա) ,  
 Վեցամսեայ՝ 5 ֆր. (Ֆրանսա) , 6 ֆր. (օտար երկրներ) , տոյ. (Ամերիկա) , 3 բուլ. (Ռուսիա) :  
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՆՈՒԿ Է :  
 Ձեռագիրները ետ չեն դարձուիր :  
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդացին զրկել հետեւեայ հասցէին :

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍՏԻ»Ի ԳՈՐԾԱԿԱԿԱՆՆԵՐԸ

Թիֆլիս —	Պարոն Գալստեան (Գուտակերպ գրալաճառանոց)
Պաքու —	» Ս. Մ. Ծոյիկեան
Ռուսնոք —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ —	» Ա. Տեմիրճիպաշեան
Պուքրէշ —	» Արիս Լույար
Դաւրէժ —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք —	» Վահան Մոզեան
Իսթ Ուոթըրթաուն —	» Կ. Մալխասեան
Ուոթըր —	» Ա. Յովսեփեան
Չիքակօ —	» Ա. Քարակալուրեան
Պրսթոն —	» Արամ Ասքանազ
Փրովիտէնս —	» Օ. Տիրատուրեան
Լին —	» Լեւոն Փափազեան